

ՀԱՅՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Ազգային Պատրիարքարանի

ԱՏԵՆ ԱԳՐՈՒԹԻՒՆՔ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1880 ԱՄԻՆ

Ն Ի Ս Տ ԺԵ-ԺԶ.

12 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1880—19 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1880



Կ. ՊՕԼԵՍ

1880

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Մ. Կ. ՍԱՐԸԵԱՆ.

20 Մերձանը Բիւշտի ԷՖէնտի խանի ցերքե. րիւ 20

**ԴԻԻԱՆՔ ԱՋԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՑ**

**ՄԱՅՐ ԴԻԻԱՆ**

Յ. Մէրեւէմ-Գուլի էֆէնտի	Ա. Արեւաշիր
Աւարել էֆէնտի Ալթուն Տիւրքի	Բ. »
Լօղօֆէթ էֆէնտի Պալեօղեան	Գ. »
Մկրտիչ էֆէնտի Մելիքեան	Ա. Արեւաշիր
Միհրան էֆէնտի Զօպանեան	Բ. »

**Չեռնասուրեան զիւան**

Հովհաննէս Բաճանայ Մկրեան  
Պապի էֆէնտի Պապօեան

Ա. Բեւ.

Միհրան էֆէնտի Զօպանեան  
Նշան էֆէնտի Օտեան  
Սեպուհ էֆէնտի Թիւրապեան

Ա. Բեւ.

**Դաստիակութեան զիւան**

Ռէթէոս էֆէնտի Պէրպէրեան  
Յարութիւն էֆէնտի Թիւրեան  
Դասպար էֆէնտի Զերազ

Ա. Բեւ.

Իրաւասուրեան զիւան  
Տելեմար էֆէնտի Էքսէրճեան  
Լօղօֆէթ էֆէնտի Պալեօղեան

**Կայուածոց զիւան**

Քրիստոսաուր էֆ. Ղազարոսեան  
Յակոբ էֆէնտի Եէմէնիճեան

Ա. Բեւ.

Նախաձեռնութեան զիւան  
Ղազար էֆէնտի Հովուեան  
Եզիազար էֆէնտի Մելիքեան  
Մինաս էֆէնտի Գափամաճեան

Ա. Բեւ.

**Համարակալութեան զիւան**

Ստեփան էֆէնտի Փափոպեան  
Յակոբ էֆէնտի Արշակ  
Պօղոս էֆէնտի Թորգոմեան

Ա. Բեւ.

Խմբագրութեան զիւան  
Կարապետ էֆ. Խլթիւճեան  
Մկրտիչ էֆէնտի Մելիքեան  
Աբրահամ էֆէնտի Մուրատեան

Ա. Բեւ.

**Ելեւտից լսնճնախումբ**

Քրիստոսաուր էֆէնտի Ղազարոսեան Ա. Բեւ. արշիր  
Մկրտիչ էֆէնտի Մելիքեան  
Միհրան էֆէնտի Զօպանեան

**Ա Ջ Պ Ա Յ Ի Ն Ժ Ո Ղ Ո Վ**

ՔԱՅՈՒՄ 1880 ԱՄԵ

**Ն Ի Ս Տ Ժ Զ.**

19 ԴԵՆՏԵՄԲԵՐ 1880

ՆԱԽԱԳԱՀ. — Ս. Պատրիարք Հայր

ԱՏԵՆԱՊԵՏ. — Քրիստոսաուր էֆէնտի Ղազարոսեան (Առժամեայ կարգեալ)

**ԱՋԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ**

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ	ԵՐԵՍՓՈՒԱՆՔ (Ա. Վ. իճակ)	ԳՆԱՎՈՐՈՒՄ, ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԵՆ ԳՆԱՎՈՐՈՒՄ ԴՈՒՐԱ	ԵՆԿՆԱՍՏԱՐ Ս. ԿԱՐԱՊԵՏ
Ա. Վ. իճակ			
1 Կարապետ Եպս. Սերոբեան	21	Գրիգոր Պէրպէրեան Բ 2	49 Միհրան Պաճանայի
2 Սիմօն Եպս. Սէֆէրեան	22	Կարապետ Ազարդաճեան	50 Պօղոս Թորգոմեան Բ
3 Ամբրոսիոս Վ. Ռուբինեան Բ 4	23	Համբարձում Մազպուլեան Բ 3	51 Նիկողոս Ալաճաճեան
4 Կարապետ Ք. Սէթեան	24	Մինաս Գափամաճեան	52 Տրդատ Փափապեան
		Բ. Վ. իճակ	( Գ. Վ. իճակ )
5 Մատթէոս Եպս. Իզմիրլեան	25	Սարգիս Ազարկեան Բ 4	Գասթմ բոշա
6 Պօղոս Վ. Խաչատրեան Բ 4	26	Սենեքերիմ Մանուկեան Բ 3	
7 Զովհաննէս Ք. Մկրեան	27	Բարթող Քիւրքճիւղաչեան Բ	53 Գասպար Զերազ Բ 2
8 Գրիգոր » Աճէմեան Բ 2	28	Գէորգ Ապուլլաչեան	Բերս
	29	Յ. Մէրեւէմ-Գուլի	54 Արիկ Ունճեան Բ 4
	30		55 Գրիգոր Սէլիմիճեան Բ 4
	31		56 Գրիգոր Յակոբ Բ 4
9 Յակոբ » Ա. Փափապեան	32		57 Միքայէլ Մօսճեան Բ 4
10 Սահակ Ք. Տ. Սարգսեան	33		58
11 Խորէն » Փէլիպպեան	34		59
12	35		60
	36		61
	37		62
13 Սարգիս Ք. Ստեփանեան Բ		( Բ. Վ. իճակ )	
14		Պէլիպպաչ	
15			Միլադիս
16		38 Ալեքսան Խորասանճեան	63 Յակոբ Նորասուճեան Բ
		39 Բարսեղ Հալաճեան	64 Տիգրան Եռասու ֆեան
		40	65 Մկրտիչ Գազանճեան
			66 Նշան Օսեան Բ 3
			67
17 Խորէն Արքե. Նար Պէլ Բ 4		ԵՆԿՆԱՍՏԱՐ	
18 Յովհաննէս Վ. Փափապեան Բ	41	Մկրտիչ Քիւրքճիւղաչեան Բ	Պէլգոզ Եւ Ղալապիտ
19 Գարեգին » Թաթարեան	42	Մարուտէ Յրէնկեան Բ	68 Միքայէլ Մաթիսեան Բ
20	43	Պօղոս Էքսէրճեան	( Գ. Վ. իճակ )
	44		Քուզլուճնուց Եւ Իճակի
		ԵՆԿՆԱՍՏԱՐ Ս. ԽԱՅ	
Բ Բաղակալութեան ստաճիւն :	45	Սիմօն Յէլիկեան Բ	69 Յովհաննէս Կասեան Բ 4
Բ. 2 Բաղակալութիւն Երկրորդ :	46		70 Ստեփան Պէլիպպեան
Բ. 4 Բաղակալութեան ստաճաւալ :			

Գրքագրիչ	ԳԱԻԱՌԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԹԱՆՔ	Մուշ
71 Մկրտիչ Մուրաթեան	Բ 3	421 Ստեփան փափաղեան
72	Կարին	Տիվրիկ
Նարեզգարու	101	422 Նշան Գարագաշ
73 Յակոբ Ալեքսիսեան	Բ 9	Զէյրուն և Մարաշ
Եկեղիմասայիկ Սամարիոյ	102	423
74	Անդրիանուպոլիս	Տրապիզոն
Թօփղալու	103 Վիչէն Ապտուլլահ	Բ 2
75 Յովհաննէս Մարգարեան	Բ	Պաղտատ
Էյուպ Ս. Եղիա և Ս. Աստուածածին	104 Կարապետ Ս. Իսթիւճեան	Բ 3
76 Գարեգին Յ. Մէլքեան	Բ 2	425 Մելքոն Իսկէնտերեան
Գուրուչէշմէ	105	Տիգրանակերտ
77 Ասփա Իկիտպաշեան	Բ	426 Միհրան Զօյանեան
Հիսար և Պոյաճի գիւղ	106	Վան
78	Ղարափսար	427
Նոր գիւղ և Սրեմիա	107 Կարապետ Խաչիկեան	Բ
9 Ղազար Հովուեան	Բ 2	Բաղէշ
Պալատ	108	Պրուսա
80 Տելեմաք Էքսերճեան	Բ 9	409 Քրիստոստուր Ղազարոսեան
81	Եղնկիա	Երեսուիա
82	Ամասիա	430 Մկրտիչ Յ. Մէլքեան
Քարակեօմրիկ	111 Համբարձում Ալաճաճեան	Բ
83 Սեպուհ Թիւրապեան	Բալու	Թուսանոգ
84	112 Յովհաննէս Ազնաւորեան	431
( Ե. Վիճակ )	Եղեսիա	Կարս
Սամարիա	113 Յակոբ Իսթիւճեան	432 Արրահամ Յ. Սյվազեան
85 Ալիքսան Պէշիբեան	Բ	Զմշկածագ
86 Եղիազար Մէլքեան	Բ 9	433 Համբարձում Սարքէշիշեան
87 Մինաս Ճաֆիճաֆեան	Բ 9	Գաղատիա
88 Նազարէթ Շահպաղեան	Բ 3	434
89 Յարութիւն Թիւրեան	114	Ատանա
90 Յակոբ Արշակ	115	Սղերդ
91 Սեպուհ Թիւրսիւզեան	Բ	435
92	116 Ռէթէոս Պէրպէրեան	436 Մատթէոս Ալէքսանեան
93	Թեքիրտաղ	Եօզղատ
94	117 Տիգրան Գ. Սինանեան	Բ 9
Խասգիւղ	Կեսարիա	Մալաթիա
95 Առաքել Ալթուն Տիւրրի	Բ 3	437 Լօղօֆէթ Պալեօղեան
96 Ռէթէոս Պէշիկճեան	118 Գէորգ Գըլքճեան	Բ
97 Սարգիս Գափուճեան	Բ 9	Խարբէրդ
98 Աթանազիոս Արապեան	Բ 9	438 Գէորգ Վարդանեան
99	119	Իզմիր
100	120	439 Պապի Պապօեան
		Եգիպտոս
		440 Արրահամ Մուրաթեան

# Ա. Չ. Ա. Յ. Ի. Ն. Ժ. Ո. Ղ. Ո. Վ.

## ՔԱՅՈՒՄ 1880 ԱՄԻՆ

### Ն Ի Ս Տ Ժ Ե

#### 12 ՊԵՏՅԵՄԲԵՐ 1880

Ազգային Ժողովն հրաւիրեալ էր այսօր իւր սովորական նիստն ընելու . և թէպէտ ասեանք բացուեցաւ , ի ներկայութիւն տասն և չորս երեսփոխանաց , սակայն նիստը չկրցաւ տեղի ունենալ :

Ժողովին առաջին Ատենապետ Մէրեէմ — Գուլի Յարութիւն էֆէնտի մայրն՝ Տիկին Փերրոնէ Հեթում Մէրեէմ — Գուլի՝ նախորդ օրն վախճաներ էր յանկարծամահ , և այսօր պիտի կատարուէր յուղարկաւորութիւնն :

Երեսփոխաններէն Տ. Եռսուֆեան էֆէնտի՝ ատեանին բացումէն անմիջապէս յետոյ՝ խօսք առնելով , այս սգառիթ դէպքը ծանոյց , և յայտարարեց թէ՛ Երեսփոխաններէն շատերն ա՛յս պատճառաւ բացակայ էին , և թէ՛ ներկայ գրտնուողներն ալ , թէ՛ իրր մտերիմ բարեկամք և թէ՛ իրր պաշտօնակիցք Մէրեէմ — Գուլի էֆէնտի , հազորդ էին անող սգոյն , և մտադիր՝ երթալ իրենց վերջին մեծարանաց հարկը մատուցանել բարեյիշատակ Հանգուցելոյն , Հեռուապէս առաջարկեց Եռսուֆեան էֆէնտին փակել այսօրեայ նիստն , ու թ օրէն դումարուելու պայմանաւ :

Եռսուֆեան էֆէնտիէն յետոյ՝ փափաղեան Ստեփան էֆէնտին խօսք առաւ , և յայտարարեց թէ՛ տարակոյս չկար որ Մէրեէմ — Գուլի էֆէնտին համայն երեսփոխանաց հաւասարապէս սիրելի և յարգելի էր , և թէ՛ ամենքն ալ վշտակցութեան միւսնոյն զգացմամբ համակեալ՝ կը փափաքէին Մէրեէմ — Գուլի Տիկինը յուղարկաւորութեան ներկայ գտնուիլ , Բայց ըստ սրում , ըսաւ , յատկապէս սոյն դէպքին համար Ժո-

ղովին առաջին Ատենապետ Մէրեէմ — Գուլի Յարութիւն էֆէնտի մայրն՝ Տիկին Փերրոնէ Հեթում Մէրեէմ — Գուլի՝ նախորդ օրն վախճաներ էր յանկարծամահ , և այսօր պիտի կատարուէր յուղարկաւորութիւնն :

զովը փակել՝ կրնար նախընթաց օրինակ մ'ընծայել, նմանօրինակ պատահարաց առջև նիստը դադարեցնելու, մինչդեռ ժողովս պատգամաւորութիւն նշանակելու ոովորութիւն ունէր. ուստի բարեփոխում մ'առաջարկեց Եռսուֆեան էֆէնտի առաջարկին վրայ, և սապէս եզրակացուց:

«Ըստ որում Երեսփոխանաց մեծագոյն մասն այսօր Տիկին Փերրոնէ Հ. Մէրեէմ—Գուլի յուղարկաւորութեան ներկայ գտնուելու պատճառաւ բացա-

կայ են նիստէն, և ըստ որում ներկայից թիւը չբաւեր ժողովոյս աշխատութեանց պարապելու, մանաւանդ որ ներկայք ալ միևնոյն պատճառաւ մտադիր և փափաքող են մեկնելու, ուստի լաւագոյն է փակել նիստն, յառաջիկայ շաբթու դումարելու պայմանաւ, և երթալ յուղարկաւորութեան մասնակցիլ:»

Երեսփոխանք համաձայնեցան այս բանաձևին, և ընդհանուր հաւանութեամբ նիստը փակեցին, ութ օրէն վերջստին դումարուելու պայմանաւ:

# Օ Ր Ա Վ Ա Ր Գ

Առաջարկութիւն Ս. Փափաղեան էֆէնտիի ի մասին հաշուետումարայ  
Կեդր. սնտուկի . — Տեղեկագիր նախաձեռնութեան Դիւանի :

Պատասխանագիր Ս. Պատրիարքի ի վերայ հարցապնդման Ս. Փափաղ-  
եան էֆէնտիի :



## ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

Ատեանը բանալու որոշեալ ժամն հասած էր , երբ տակաւին ոչ Ս. Նախագահն և ոչ Ատենապետ էֆէնտիներն եկած չըլլալով , Դիւանի անդամներէն միակ ներկայ գտնուող երկրորդ Ատենադպիր Մ. Զօսյանեան էֆէնտի ժողովոյն հաւանութեամբ տտեանը կրանայ ժամը 7 1/2 ին , ընդ տա ժամեայ նախագահութեամբ Տ. Կարապետ Եպիսկոպոսի Սերտիբեան , և ի ներկայութեան 13 երեսօտիտնաց , որոց թիւն ի վերջէ 44 ի կը յանգի :

— 0 —

1 .

ԱՍՏԱՆՁՈՒԹԻՒՆ

Երեսօտիտաններէն՝

Տ. Պօղոս Վարդապետ Խօլտամեան ճամբորդութեան պատճառաւ ,

Տեղեմար էֆէնտի Էնթսէրճեան  
և Յակոբ Պ Եէմէնիճեան

անձնական տկարութեան պատճառաւ բացակայութիւննին գրով յայտնած ըլլալով , սոյն օրինական բացակայութիւնները ժողովին ծանուցուելէ ետեւ , կը նշանակուին ներկայութեան տումարին մէջ :

— 0 —

2 .

ԱՍՏԱՆՁՈՒԹԻՒՆ Ս. ՓՓՔՔՔԱՆ ԷՖԷՆՏԻ

Երեսօտիտաններէն Ս. Փափաղեան էֆէնտիի մատուցած յետագայ առաջարկութիւնը կը կարգացուի :

ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

Յայտնի է որ Ազգային ժողովին ի 10 Օգոստոսի 1879 որոշեց ջնջել բարենորոգմանց Խորհրդարանական Յանձնախումբը, և այդ պաշտօնն յանձնեց Ամենապատիւ Ս. Պատրիարք Հօր, որ նոյն օրն իր հրատարականն ետ առնելով բարեհաճեցաւ Պատրիարքական պաշտօնը շարունակել: Ս. Պատրիարք Հայրն ալ յանձն առաւ որ ինչպէս և որոշ խորհրդակցութեամբ եւ գործակցութեամբ որ սկսեց Հայկական խնդիրը, նոյնպէս շարունակէ վարել:

Բարենորոգմանց Յանձնախումբն յառաջ քան իր հրատարակն իր քառամսեայ պաշտօնավարութեան մանրամասն համարատուութիւնն մատուցած էր Ազգային ժողովին, ի 29 Յունիսի և 6 Յուլիսի 1879՝ երկու դռնփակ նիստերուն մէջ: Սակայն 1879 Օգոստոս 10 թուականէն ասդին 15—16 ամիսներ անցած է, և ժողովս Ս. Պատրիարք Հօր առանձին գործոց վրայ տակաւին տեղեկութիւն մը չունի. և ըստ որում ժողովս վարչական նոր օրէնքն ի 5 Սեպտ. 1880 հաստատելով, այլ ևս Ս. Պատրիարք Հօր առանձին պատասխանատուութեան պաշտօն թողուցած չէ, ուստի կ'առաջարկեմ,

« Յանձնարարել Մայր Դիւանին, որ Ս. Պատրիարք Հօր կարծիքն ստանալէ « յետոյ՝ օր որոշէ զժողովս դռնփակ « նիստի հրաւիրելու. յորում Ս. Պատրիարք Հօր առանձին պատասխանատուութեան ներքեւ 1879 Օգոստոս 10է

« մինչև նոր վարչութեան հաստատու-  
« թեան թուականն եղած 15 ամսեայ  
« գործոց համարը ներկայացուի Ազգա-  
« յին ժողովիս:

Ազգ. Երեսփոխան  
Ս. Պ. Պ. ՓԱՓԱՋԵԱՆ

19 դեկտ. 1880

( Յետ ընթերցման )

Կարգացուած առաջարկութեան վրայ դիտողութիւն տեղի չունենալով, իրր սրտը յըզումն քուէի դրուելու միջոցին, ըստ որում օրէն չէ սուանց ատենապետի խնդիրներ վիճաբանութեան դնել եւ քուէարկել, երկուսոյն երեւոյթիս Գրիստոստոսը էֆէնտին կը հրաւիրուի առժամեայ ատենապետութեան օրացտօն ստանձնել:

Հետևաբար Գրիստոստոսը էֆէնտի ատենապետութեան ամսուն անցնելով, Փափազեան էֆէնտիի առաջարկութիւնը քուէի կը դնէ, և ժողովն միաձայն ընդունելով դոյն, կը յանձնարարէ Մայր Դիւանին ի գործադրութիւն:

— 0 —

3.

ԳԱՐՉՆԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ Ս. ՓԱՓԱՋԵԱՆ ԷՖԷՆՏԻ

Փափազեան էֆէնտիի յետագայ առաջարկութիւնն ալ կը կարգացուի:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

Հայկական խնդրոյն ամենաջերմ վիճակին մէջ Մշոյ, Ս. Կարապետի վտանուց միարան քանի մը վարդապետաց և վանահօր Մամբրէ Եպիսկոպոսի մէջ այն-

պիսի վէճ և կռիւ բացուած էր, որ համայն ազգասիրաց ցաւ և զղուանք տրուած էր: Վերջապէս ամբաստանող միաբանք և ամբաստանեալ վանահայր բերուեցան ի Պօլիս, և բաւական ատեն դատուելէն յետոյ արձակուեցան, կամ ճիշդն ըսելով՝ անոյշ տեղը կապուեցան:

Ժամանակ անցնելէ յետոյ լսեցի այս դատաստանին ելքը և թէ պատժուեր է արդարև ամենանմեղ մէկը, այն է Ս. Կարապետի վանուց սնտուկը, որ Պատրիարքարանի վճռով դատապարտուեր է երկու կողման այս վէճին պատճառաւ ի Պօլիս ըրած ծախքերը վճարել: Չուղեցի հաւատալ, և այն արտօնութեամբ՝ զոր Ազգային ժողովն երեսփոխանաց տուած է վարչութեան անցեալ գործոց տուամարներն աչքէ անցընել, դնացի Դիւանատուն և դոտայ թէ՛ արդարև 1535 թուահամարաւ դրուեր է առ Միաբանութիւն Ս. Կարապետի թէ ինչպէս ամբաստանեալ վանահօր՝ նոյնպէս և ամբաստանող միաբանից ի Պօլիս ըրած ծախքերը վանուց սնտուկը պարտի վրճարել:

Ահա գործնական ապացոյց թէ եկեղեցականք ընդհանրապէս ինչ աչօք կրնային ազգային սնտուկներուն վրայ և իրրև ինչ կըմբռնեն զանոնք. մենք ասդին պարապ տեղ ազգային դատարակութիւն և յառաջադիմութիւն կազմակերպեալ այդ ազգային սնտուկներուն շնորհիւ:

- Արդ կ'առաջարկեմ
- 1. Ս. յդ որոշումը տուող մարմինն ի պատասխանատուութիւն հրաւիրել.
- 2. Յանձնարարել նոր վարչութեան

որ թէ ամբաստանեալ վանահօր և թէ ամբաստանող միաբանից ի Պօլիս ըրած ծախուց մանրամասն ցուցակներն ստանալով մատուցանէ Ազգային ժողովիս, որք թերևս լուսաւորեն զմեզ իրաց արդի տխուր վիճակին վրայ, սրոյ բարւոքմանն համար այսքան ջանք և աշխատութիւն ի դերև կ'երնեն ի ցաւ և ի տրտմութիւն ճշմարիտ ազգասիրաց:

Ազգ. Երեսփոխան  
Ս. Պ. Պ. ՓԱՓԱՋԵԱՆ

19 դեկ. 1880

( Յետ ընթերցման )

Ատենապետ էֆէնտին երեսփոխաններն ի զիտողութիւն կը հրաւիրէ կարգացուած սոյն երկրորդ առաջարկութեան վրայ:

ԳԱՐԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Կործեմ չարժէր սոյդ մասին վիճարանել. անմիջապէս յըզելի է ուժ որ անկ է:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Մեր Ս. Պատրիարքին կ'յղենք, նա կ'յանձնէ որում որ անկ է և պատասխանն առնելով ժողովին կը բերէ:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Առաջարկութիւնն երկու կէտ կը սրտունակէ, նախ՝ սրտում մ'եղեր է որ Մշոյ Ս. Կարապետի վանուց սնտուկն այդ ծախքերը վճարէ. որչա՞մ սուող մարմինը պէտք է պատասխանէ թէ ինչօ՞ւ սոյդ որչա՞մն ըրեր է: Երկրորդ՝ նոյն ծախուց գումարներուն ցուցակն ուղել վարչութեանն: Այս երկու կէտն ալ բնականաբար Ս. Պատրիարքին կը յղուի, որ մին նախորդ վարչութեան և միւսն սրդի վարչութեան յանձնէ ի տեղեկագրութիւն:

Ատենապետ էֆէնտին տեսնելով որ հասարակ խօսուց չ'կայ, անմիջապէս յուէի կը դնէ փոխադեան էֆէնտին սոյն երկրորդ առաջարկութիւնը, զոր ժողովը միաձայն ընդունելով կը յանձնարարէ Գիւանին՝ յղել առ որ անի է:


Սոյն պահուն Ա. Ատենապետ Մէրեկմ— Գուլի էֆէնտին ժողովարան մտնելով երեսօտ խանայ կորզը կերթայ կը բազմի, և այնինչ Գրիտատատու էֆէնտին Գիւանին մեկնելով Ատենապետի աթոռն անոր յանձնել կուզէ, Մէրեկմ—Գուլի էֆէնտին խօսք կտանու, եւ յուզեալ վիճակի մէջ կըսէ:

ՄԵՐԵԿԵՄԳՈՒԼԻ Յ. ԷՅ. — Կազաչեմ Քըրիտատատու էֆէնտին որ շնորհ ընէ յթողուլ այսօր Ատենապետի աթոռն: Ես չսիրի կըրնամ Գիւանն անցնիլ այս պահուն, վասն զի չտախապանց յուզեալ եմ, յիշելով ինձ պատահած ցաւոյի արկածին պատճառաւ նախընթաց նիտին չկարենալ գուժարուիլ: Այս յուզումն այնչափ մեծ է, որ չեմ գիտեր թէ՛ նախ շնորհակա՞լ պէտք է ըլլամ իմ Երեսօտին պաշտօնակիցներէս, որք բարեկամական անկեղծութեամբ փութացին անցեալ ուրբաթ օրն իրենց ցաւակցութիւնն յայտնել ինձ, սոյն մեծ կորստեան համար՝ զոր մօրս մահուամբը կրեցի, եթէ իմ ցաւոցս վրայ ցո՞ւ մ'ալ պէտք է յաւերում, մտածելով որ այդ դառն հարուածը միանգամայն և արգելք է եզեր ժողովոյ գումարման:

Կզգայի արդէն թէ ժողովին ներկայանալու զօրութիւն չկար վրաս, և սակայն ճիշդ մ'ըրի գալու, վասնզի գիտէի թէ գոնէ շնորհապարտ զգացմանցս յայտարարութիւնն ընելու արարտաւոր էի առ ձեզ: Ի վերայ այսր առ մեկնայնի՛ վշտահար սրտիս յուզումն իմ կարծածէս ալ աւելի սաստկացաւ ժողովարանին ներս մտնելով, այնպէս որ՝ խօսելու անգամ զժուարութիւն կզգամ այժմ, և չեմ վստա-

չիր տակալու Գիւանին վրայ: Այս վիճակիս մէջ, ուր զէ՛քս բերնէս տղէկ կը խօսի ձեզ, յուսում թէ կը կարեկցիք իմ վրայ և կը ներէք ինձ այսօր Ատենապետի պաշտօնն չվարել: Ուստի կը թախտնձեմ Քրիտատատու էֆէնտինն որ բարեհաճի Ատենապետի Աթոռն չթողուլ և ստեանը վարել:


Երեսօտին ցաւակցութիւն կը յայտնեն Մէրեկմ—Գուլի էֆէնտին, և կը հուանին խնդրած թողութեանն. սւտի Գրիտատատու էֆէնտին կը շարունակէ առժամեաց Ատենապետի պաշտօնն:



ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԸՄԱՔԵՆԻՉ ԳՒՄԱՆԻՑ ԱՅՆԱԳՅՏԵՆՐՈՒ

Կալուածոց և Գասախարակութեան դիւանայ ատենապետներուն ընտրութիւնը ծանուցանելով Գիւանը, կը յայտարարէ թէ առաջինն ատենապետ ընտրած է Ղազարուեան Քրիտատատու էֆէնտին և երկրորդն՝ Պէրպէրեան Ռէթէոս էֆէնտին:

(Սոյն միջոցին Ս. Պատրիարքը գալով կը նախագահէ ժողովին):



Օ Ր Թ. Կ Ա. Ր Գ.

Ա.

ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ Ս. ՓԱՓԱՋԵԱՆ ԷՖԵՆՏԻ Ի ՄԱՍԻՆ  
ՆԱԽՆԵՏՈՒՄԱՐԱՑ ԿԵՂ. ՄԵՏՈՒԿԻ. — ՏԵՂԵԿԱԳԻՐ  
ՆԱԽՈՒՆԵՆՈՒԹԵԱՆ ԳՒՄԱՆԻՑ

Ատենապետ էֆէնտին կարգաւ կուտայ Նախաձեռնութեան Գիւանի տեղեկագրին (ՏԱՍ րացում 1879 ամի Նիստ Ի. Երես 309) երկրորդ մասն, և կը յիշեցնէ ժողովին թէ անոր առաջին մասն, որ դատարանայ ունկնդրութեան ինչպէս կը վերաբերէր, իւր որոշումն արդէն առած ըլլալով, կը մնար Կեղր. Սընտուկի հաշուետուարաց քննութեան մասն, սրայ համար Նախաձեռնութեան Գիւանի տեղեկագրի կառաջարկէ Կեղր. սնտուկի կշիռն ու վիճակն ամեն ամսագլուխ հրատարակել ի պաշտօնէ: Ուստի վիճարանութիւնն այս կէտին վրայ բռնալով, խօսք ուղղուեցրը կը հրաւիրէ իրենց կարծիքը յայտնել:

ՄԵԼԻՔԵԱՆ Գ. ԷՅ. — Կեղր. սնտուկի ելմտական գործողութեանց նկատմամբ փոփոխեան էֆէնտին ըրած առաջարկութիւնն սկզբումը իրաւացի կը գտնեմ, ինչպէս նաև Նախաձեռնութեան Գիւանի տեղեկագրին այն եզրակացութիւնն՝ որ այս կէտին կը վերաբերի Միայն թէ գործնական մասին մէջ դժուարութիւններ նկատելով փոքրիկ բարեփոխում մը կառաջարկեմ, այն է՝ փոխանակ ամսէ ամիս Կեղր. սնտուկի հաշուոց վիճակը հրատարակուելու 3 ամիսն անգամ մը հրատարակուի:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅ. — Իմ այդ առաջարկութիւնը բերելէս ի վեր 2 տարի անցած

է, իսկ Նախաձեռնութեան դիւանին բերուած տեղեկագրին մէկ տարուան կը մօտենայ: Գիւանէր արդէն թէ իմ առաջարկութիւնս երկու կէտէ կը բաղկանար, երկուքն ալ հուսատարապէս կարևոր. մէկն ազգային դատարանին գործողութեանց վրայ հսկողութեան մասն էր, որուն համար առաջարկած էի ազգային դատարանի գոներն Երեսօտինսոց բաց լինել: Այս բաց ըլլալու սկզբունքն ի հարկին գործնական վերածելու պայմանաւ ընդունելով փոփոխ յղուեցաւ նորընտիր Վարչութեան, որպէս զի իր շինելիք դատարանական օրինաց ծրագրին մէջ այդ սկզբուն համաձայն պէտք եղած մանրամասնութիւնքը նկատողութեան տանու: Առաջարկութեանս միւս մասն ալ, որ Կեղր. սնտուկի գործողութեանց հսկողութեանը կը վերաբերի, դատական մասին չափ կարևոր է: Մեք երկու տարի յառաջ Ելմտացոյց մը քուէարկեցինք և յանձնեցինք Վարչութեան, արդեօք ճշդութեամբ գործադրուած է թէ ոչ, չգիտենք, վասն զի 79—80 ամի հաշուեցոյցն՝ որ անցեալ Մայիս 4 ին գալու էր, դեռ չէ եկած, Գ. Մելիքեան էֆէնտին 3 ամիսն անգամ մը հաշիւ բերել կըսէ, ես շնորհակալ սիրտի ըլլամ եթէ 3 ին տեղ 4 ամիսն անգամ մ'ալ բերէ, բայց նախորդ Վարչութիւնը ամբողջ տարուան մը հաշիւն ալ չբերու: Ինձ կը թօրի թէ ամեն ամսագլուխ հաշիւ բերելը դժուարութիւն մը չունի, հարկաւ խրաքանչխր ամիս Կեղր. սնտուկի հաշիւները կը գոցուին, և որովհետև մեզի մանրամասնութիւնը չսիրտի բերեն, այլ ելմտացոյցին խրաքանչխր գլխոց ելից և մշտից գումարները միայն ցոյց սիրտի տան, չը գիտեմ թէ ստոր մէջ ի՞նչ դժուարութիւն կընայ ըլլալ: Այդ բանն երբ ահագին սրանքաները կընեն և դժուարութիւն չեն կրեր, մի՞թէ մեր Կեղր. սնտուկին համար դժուարին կընայ ըլլալ: Վերջապէս ստակի խնդիրը վարկի խնդիր է. ես առաջարկած էի որ Կեղր. սնտուկի տուժարները բաց ըլլան Երեսօտինսոց համար. իսկ Նախաձեռնութեան դիւանը բարեփոխեր է գոյն և ամեն ամսա-

դրուի անտուկին վիճակը հրատարակուի ըսեր է ևս այդ բարեփոխումը կընդունիմ, և կը խնդրեմ որ Գ. Մելիքեան էֆէնտի ալ ընդունի, և երբ աղէկ կըլլար եթէ Մելիքեան էֆէնտի յանուն Վարչութեան փոխանակ 3 ամիսն անգամ մը հաշիւ բերել խտտանալու, 43 օրն անգամ մը բերելու սրատրուստ լինելն յայտարարէր. սակայն նա ոչ միայն այս շքութեամբ, այլ և Նախաձեռնութեան ղիւանի աւաջարկն ևս չարտարել ուզէր. որ աղէկ ստորորութիւն չընէր:

**ՄԵԼԻՔԵԱՆ Գ. ԷՖ.** — Նախ՝ հարկ կը համարեմ ըսել թէ ևս իբր երեսփոխան խօսեցայ և ոչ թէ յանուն Վարչութեան, ինչպէս կարծեցնել ուզէր ֆախտեան էֆէնտի. զի յանուն Վարչութեան խօսելու համար պէտք էր կանխաւ Վարչական խորհրդոյ կարծիքն առած ըլլայի: Աստի խիստինացութեան սեղի շատու համար այս կէտը սարգելէ ետեւ, կանցնիմ բուն խնդրոյն:

Ես եթէ ըսի որ Վեդր. սնտուկի վիճակը փոխանակ ամեն ամսագլուխ հրատարակուելու 3 ամիսն անգամ մը հրատարակուի, հարկաւ առանց պատճառի չէր, և այդ պատճառն ալ որիչ բան չէ, բայց միայն Պատրիարքարանի հաշուեկալութեան գործնական ուղղութիւն մը տրուած չըլլալն. ասով բնաւ ըսել չեմ ուզեր թէ հաշիւներուն մէջ ղեղծում կամ շիտթութիւն կայ: Պանրաներն այնպիսի ուղղութիւն մը տուած են իրենց հաշուեկալութեան, որ կարող են ամէն ամիս և թերեւ ամեն օր իրենց վիճակը հրատարակել: Երբ նոր Վարչութիւնը կարենայ ասլ Պատրիարքարանի հաշուեկալութեան նոյն ուղղութիւնը՝ այն ասան Վեդր. սնտուկն ալ չէ թէ ամեն ամսագլուխ, այլ թերեւ ամեն օր կրնայ իր վիճակը հրատարակել, բայց հիմակուհիմա տակաւին այն դրութեան մէջ չէ. անոր համար փոխանակ ամեն ամսագլուխ ամեն եռամիս առաջարկեցի հիմակուան համար: Փախտեան էֆէնտին թող զո՞ ըլլայ աւայթմ 3 ամիսն անգամ մը սնտուկին վիճակը հրատարակուելուն. թերեւ

ստորագրուի մէջ ամէն ամիս կամ ամիս շաբաթ ալ հրատարակուի:

**ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ.** — Պայմանաժամին երկարելու հարկ չկայ. օրէնքը բացառութիւն չզերցնէր, ամէն ամիս հրատարակուիլը թող այս օրուրնէ հաստատուի, և Վարչութիւնն ալ սրատուարի զայն գործողութիւն: Սակայն մեր ներկայ Վարչութեան վրայ վստահութիւն ունինք. եթէ սա իր սրտածնին մէջ նոր մը տած ըլլալուն ասթիւ չկրնայ յանձնարին հաշիւը բերել, թող փետրուարին երկուքը մէկին բերէ. ժողովը կրնայ այդ դիւրութիւնը մատուցանել իրեն: Վարչական կազմակերպութեան նոր օրինաց համաձայն Տնտեսակախորհրդականը սնտուկն պատասխանատու է սա ժողովին. երբ հոս կը խօսի Վեդր. սընտուկին վրայ բացառած խնդրոյ մը մէջ, պատշաճապէս կը խօսի. ուստի իր յայտարարութիւնը թէ Վեդր. սնտուկին հաշուեկալութեան լաւ ուղղութիւն տրուած չէ, ծանրակշիւ է, ուստի այդ յայտարարութիւնը թող արձանագրուի և մնայ հոս:

Մեր դառնանք քուէարկել Նախաձեռնութեան ղիւանի բերած այն եզրակացութիւնն, որ ամեն ամսագլուխ Վեդր. սնտուկի վիճակին հրատարակութեան կը վերաբերի. այսօրուրնէ իբր օրէնք ընդունինք զայս և խնդրը փերջացնենք, և Վարչութիւնն եթէ գալ ամիս շք կրնայ սնտուկին վիճակը հրատարակել, թող զայ պատճառը յայտնէ և միւս ամսագլուխին երկու ամսուանը միտուել բերէ: Մէկ խօսքով սողը պէտք է իր սնտուկը մտածն ու երածը ղիւանայ ամեն ժամանակ:

**ՄԵԼԻՔԵԱՆ Գ. ԷՖ.** — Իմ խօսքերուս լաւ ուշադրութիւն ընել կը խնդրեմ. ես ըսի և նորէն կըսեմ թէ Վեդր. սնտուկին հաշիւներուն մէջ ղեղծում կամ շիտթութիւն չկայ. միայն հաշուեկալութեան կանոնին կամ ուսման պահանջած ուղղութիւնը անկատար է, մեր Պատրիարքարանի համարակալութեան ղեքութեան մէջ:

Ստացք է սակայն որ Պատրիարքարանի համարակալը ալ իրենց համար դրութիւնն մ'ընդունած են, որ քստ ինքեան ուղղութիւն մ'ունի, սակայն այդ չհամարադասութեան հաշուեկալութեան կանոնին կամ սնտուկն սրահանջած գործնական կատարուել ուղղութեամբ, զոր ևս կը փնտուկ:

Գալով Փախտեան էֆէնտի այն յայտարարութեան թէ օրէնքը բացառութիւն չզերցնէր, ևս կըսեմ թէ օրէնքն ալ ունի իր բացառութիւնները, և թէ ի՞նչպէս: Շատ սեղ օրէնքներ կը դրուին, բայց սրայմանաժամ մ'ալ կորուզուի այս ինչ կամ այն ինչ թուականէն գործողութիւն է ըսելով, իմ ըսած սրայմանաժամն ալ այս կարգէն է: Այժմ՝ դեկտեմբերի մէջ եմք և յունվարին կը մերձենաք. ըսել է մինչև մեր սահմանադրական տարեգլուխն՝ որ մայիս 1 ին է, չորս ամիս կոյ. ևս կը խտտանում 80—81 տարուց հաշիւները մինչև մայիս 1 բերել. և անկէ ետեւ դիւրին է ամեն ամսագլուխ հաշուեցոյց ներկայել ժողովին:

**ԵՈՒՍՈՒՅԵԱՆ Ց. ԷՖ.** — Ես բոլորովին խնդրոյն սկզբունքին դէմ պիտի խօսիմ, ևս կը կարծեմ թէ Ազգային ժողովն եթէ այնպիսի անօրէնութիւն մ'ընէ որ Վեդր. սնտուկին վիճակն ամեն ամիս, կամ 2—3 ամիսն անգամ մը լրագրայ մէջ հրատարակուի, ամենամեծ սխալ մը գործած կըլլայ: Ես կը գովեմ այն ամեն առաջարկներն՝ որ Պատրիարքարանի սնտուկին վիճակը բարւոյնելու նպատակ ունին, որոյ կարգէն է նաև ներկայացուել առաջարկութիւնը. սակայն անոր հետ մէկտեղ ձեր ուշադրութեան կը ներկայեմ այն մեծ անտեղութիւններն՝ որք Պատրիարքարանի սնտուկի վիճակին սրբերական հրատարակութեան կրնան հետեւիլ: Տեսնուած չէ երբէք որեւէ սահմանադրական վարչութեան մը մէջ որ իր գրասեղանին գործերը գրամատան մը հաշուեցոյցերուն նման լրագրայ մէջ հրատարակուին. և եթէ ուրիշ տեղ գտնուի իսկ այդպիսի դրութիւն մը մենք չեմք կրնար զայն մեզ օրինակ սանուլ: Մեր ազգին ներկայ վիճակը կը սրահանջէ այդ կէտին լաւ ուշադրութիւն ընծայել և հետեանքը աղէկ կըսել թէ հարկ է լրագրայ մէջ անցնել որ Վեդր. սնտուկին անգլին անգլին սրահանջած է և թէ ի՞նչ տեսակ ծախքեր ըրած է: Ազգային ժողովն ազգին երկտական վիճակը պէտք է դիտնայ, և այդ նպատակաւ է որ ամեն տարեգլուխ սնտուկին հաշիւը կը ներկայացուի իրեն մասնաւոր ելմտայցով, բայց չեմ ուզեր ընդունիլ այն կարծիքը թէ Պատրիարքարանի սնտուկը գրամատեղան մ'է, և թէ ժողովուրդն իր վարկը տալու համար պէտք է հրատարակութեամբ իմանայ անոր ելեմտից ամեն մանրամասնութիւնն, շատ ծանր և փափուկ խնդիր մ'է այս, որուն տակէ տակ թացատրութեան մէջ մտնելն իսկ աւելորդ կը սեպեմ, աղտոյցով Ձեզ որ լաւ ուշադրութեան ասուք անոր հետեանքներն: Գրէք ամեն « բոնիբոլ » ի՞նչ կուղէք ըրէք. բայց լրագրայ միջոցաւ Պատրիարքարանի գանձային վիճակը հրատարակելու սկզբունքը մի ընդունիք, վասնզի վնասակար է այն և ոչ օգտակար:

Ստացք է սակայն որ Պատրիարքարանի համարակալը ալ իրենց համար դրութիւնն մ'ընդունած են, որ քստ ինքեան ուղղութիւն մ'ունի, սակայն այդ չհամարադասութեան հաշուեկալութեան կանոնին կամ սնտուկն սրահանջած գործնական կատարուել ուղղութեամբ, զոր ևս կը փնտուկ:

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — (Ընդմիջելով) Բայներեցէք որ յիշեցնեմ թէ ստաճարկութեան մէջ լրագրայ միջոցաւ հրատարակութեան խօսք չկայ. ի սրտածնէ հրատարակուի ըսուած է:

**ԵՈՒՍՈՒՅԵԱՆ Ց. ԷՖ.** — (Շարունակելով) Լուր եթէ հրատարակելու խօսք չկայ, ևս իմ դիտողութիւններս ևս կ'աւանում. բայց կարծեմ թէ այդ մտքը կը հասկցուի: Պատրիարքարանի գանձային վիճակը « բոնիբոլ » տակ առնուել աղէկ է. այս նպատակը գովելի է միշտ. նորակալմ Վարչութիւնը պիտի հոգ տանի այս մասին, լրացուցիչ Պիւտճէի դրութեամբ, որ մեր մէջ մուտ գտած չէ տակաւին. բայց այս բաներուն մէջ չենք կրնար մէկին ի մէկ մտնել ոչև կամայ կամայ յառաջ պիտի երթանք: Աստի Ազգային ժողովն աղէկ կընէ եթէ այս լրացուցիչ Պիւտճէի դրութեան սկզբունքն ընդունի և որչէ որ տար



գըլխուն լրացուցիչ Պիտոնէն գոյ, որ ըստ օրինի տարին միանգամ կուգոյ, և քօնթօրոն անոր մէջ է: Եթէ ժողովն այդպիսի որոշում մ'ընէ, ապա դէմ ըսելիք չունիմք այց և թէ միւս կողմէ ամեն ամիս հաշիւները հրատարակել սրտուի, այդ ոչ միայն սնտուկի վարկին դէմ հարուած մ'է. այլ և ներքուստ և արտաքուստ վարչահան գործոց ընթացքին փնտս:

**ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՃ.**— Երեսուֆեան Էֆէնտի բացատրութիւններէն եթէ կրցայ բան մը թափանցել սոս է որ ինք իրը Վարչական խորհրդոց անենապետ պատասխանատուութենէ չուզեր խտաստիել, միայն կուզէ որ ամեն ամսագրուի սնտուկին վիճակը հրատարակելու գրութիւնն իրը փնտասկար չընդունուի:

Իսկ բուն փնտասկար կողմն ինչ ըլլալը մեկնելու հարկ չտեսներ: Ըստ իս' եթէ տարեկան հաշուեցոյցի հրատարակութիւնն փնտասկար չէ, ամսական հաշուեցոյցի հրատարակութիւնն ալ փնտասկար չկրնար ըլլալ. Եթէ ոչ բացարձակապէս պէտք է ըսենք թէ հրատարակութիւնն որեւէ կերպով ալ ըլլայ՝ փնտասկար է: Ինչո՞ւ ազգային սնտուկին գըլխուն անցնողները անոր վիճակն հրատարակելէն այսչափ երկիւղ կըգան, և կը վարանին հրատարակել: Այսպիսի վարանմանց արդիւնքը չէ՞ որ այսօր Երեսուղէ մի փանրը 30 հար լիրտ պարտական ինկած է, Յունաց և այլ ազգաց իր նիւթական վիճակը ցուցնելէ դժուարանալով. թէև այսօր արարք ունենալը համայն աշխարհ ըսեց:

Ես ընդհանրապէս կըսեմ թէ ինչպէս Աեդր. սնտուկին վիճակին տարեկան հրատարակութիւնն իր օգուտներն ունի, նոյնպէս և սուսուել ևս ամսական հրատարակութիւնն թէ պէտք և թէ օգտակար է սոգդին վստահութիւն ներշնչելու համար. վասն զի ամեն Հոյ տեսնելով որ յատկապէս ծախքերն ճշգրութեամբ կը կատարուին ոչ աւելի և ոչ պակաս, գոհ և վստահ կըլլայ. և երբ տեսնեն թէ մըտից կողմն նուազութիւն կայ, կը փութայ իր

տուրքն իր ձեռք տանիլ և վճարել, եթէ յարաւած է: Ըսի և դարձեալ կըսեմ. դրամական խնդիրն ամենէն կենսական խնդիր է մեզի համար. ամեն բան դրամով կըլլայ. շատ բանի կրնայ ներառիլ, բայց դրամական մատակարարութեան վերաբերեալ որեւէ փոքրիկ թերութեանց պէտք չէ ներել. շատ բանի ցարդ աչք գոցած ենք, նոյնպէս և դրամական խնդրոց, բայց սրտհեռու որեւէ զանցառութիւն պէտք չէ ներել. այս սրտածառու սնտուկը մտածն ու ելածը պէտք է գիտնանք, և տւելի կարճ ժամանակներու մէջ: Ես ուղեցի որ սնտուկի տեսարաններն երեսուֆեանոց համար բաց ըլլան, որպէսզի ուղղուն քննէ և հասկնայ անոր վիճակը, և երբ թերութիւն մը տեսնէ, խնդիր ընէ և հարցում ուղղէ յատենի սատ. կըսեն թէ տարեգըլխուն պիտի գան հաշիւները. ո՞ր է տարեգըլխուն անցաւ, և երկրորդ տարեգըլխու մ'ալ կը մտենայ, տակաւին հաշիւը չեկու. երևոյցոյցը քուտարկուելէն ի վեր այդ հաշիւները չրեքուեցան, որ զիտանք թէ Աղգ. ժողովոյ որոշումն ճշգրիտ գործադրուեր է: Բայց թէ որ չէ գործադրուեր, ի՞նչ պիտի ընենք. ձգող երեւոյ Վարչութեան մը համար պարասանաց բուէ պիտի տանք. կամ եթէ սրտու են թողեր, իրենց բասիէն պիտի վճարել տանք անոնց: Այս նկատումներով էր որ գրեթէ երկու տարի յառաջ այս բեմին վրայն առաջարկեցի որ երեսուֆեաններն ազատ լինին երթալ և կեդր. սնտուկի տուճարներն նոյնիւ և միշտ հսկել տանց վրայ:

Իմ այս առաջարկութիւնս Նախածեանութեան Գիւտնք բարեփոխներ և ըսեր է որ ամեն ամսագրուի սնտուկին վիճակը հրատարակուի: Ես այս բարեփոխութիւնը կընդունիմ: Բայց ըսուեցաւ թէ դժուարութիւն կայ. ի՞նչ դժուարութիւն է այդ, զոր ես չեմ հասկընար: Մտուկ ըսածդ տեսարակ մ'ունի, Գանձարանին ձեռքը, որոյ մէկ կողմն ամեն օր ինչ որ կը մտնէ կը գրուի, և միւս կողմն ինչ որ կեւնէ նոյնպէս կը գրուի. ուրիշ մաս նաւոր տուճար մ'ալ կայ որ ելից, և մտից իւր

բաքանչիւր գլխին համաձայն բաժանեալ է, և համարակալին ձեռքն է ոյն: Աստ պէտք է ըսեմ թէ ևս չեմ ընդունիր որ Պատրիարքարանի համարակալն հաշուեկալութեան այսպարզ կամոնին համեմատ վարուիլ չգիտնայ և թէ մինչև հիմա մեզի եկած հաշուեցոյցերուն մասին կանոնական թերութիւն մը նըշմարտած չէ ձեռնհաս անձերէ: Երբ ամսագըլխու կըլլայ. համարակալին ընելին ուրիշ բան չէ, այլ ելից և մտից իւրաքանչիւր գըլխին յատկապէս երեսներուն մէջ գլծ մը այս կողմը և գլծ մը միւս կողմը քաշելով գոցել նոյն ամսուն հաշիւը, և հաշուեցոյց մը շինել. որմէ պիտի տեսնուի թէ նոյն ամսոյ մէջ մտից իւրաքանչիւր տեսակէն սրչափ դրամ մտեր է սնտուկը, և ծախուց իւրաքանչիւր տեսակին համար ինչ քանակութեամբ դրամ ելեր է սընտուկէն, ո՞ր ծախքերն են որ անմիջապէս կը վճարուին և ո՞ք՝ որ անվճար մնացած են. և նս Եթէ այսչափ խնդիր ըլլալէ յետոյ այս հրատարակութիւնը խափանենք, պէտք է զիտնալ թէ այս օրուրնէ մեծ հարուած տուած կըլլանք սնտուկին. վասնզի դրամ տուող ժողովուրդն է. և անկէ ծածկել ուղեւով գայթակրութիւն սերմանած պիտի ըլլա՞նք անոնց մէջ:

Ամփոփելով՝ կեդրակալնեմ թէ, ըստ որում Տնտ. Խորհրդական Մեյլիքեան Էֆէնտի յայտարարութիւն կընէ թէ, մինչև յառաջիկայ մայիս մէկ ներկայ 80—81 ի հաշիւները կը բերենք, և անկէ ետե ամսէ ամիս սնտուկին վիճակը կը հրատարակենք. ըսել կուզէ որ ամսագրուի հաշիւ հրատարակելու օրէնքն այսօր ուրնէ դրուի, բայց գործադրութիւնը մայիս 31 ին լինի. ես այդ ալ կընդունիմ. հերիք է որ ամսական հրատարակութիւնը՝ զոր խիստ ազէկ մտածեր է Նախածեանութեան Գիւտնը. իրր օրէնք այսօրուրնէ հաստատուի. թող ազգը և համայն աշխարհ զիտնայ թէ Աեդր. սընտուկն ի՞նչ կը մտնէ և ի՞նչ կեւնէ. մեք դադունի պահելու ոչ մուտք ունինք և ոչ ծախք. վստահուլու կամ ակնածելու սլ բան մը չունինք:

S. ՄԱՏԹԵՆՍ ԵՊՍ. — Երեսուֆեան Էֆէնտի փոփոխեան Էֆէնտի հաշուեկալութեան քննութեան մասին ըրած առաջարկը ըրեսու տեղի չպիտի ունենար, եթէ նախորդ Վարչութիւններ իրենց հաշուեկալութեան նախին և ամեն տարեգըլխու պիւտնէ բերած լինէին, այժմ Վարչութեան դիրքը փոխուած է: Թէև արդէն հարցապնդման օրէնքը կար, ստիպն չկար վարչական խորհրդանչիւր ճիւղի պաշտօնեայ՝ որուն ի հարկին հարցումն ուղղուէր և պատասխան տանուէր, այսօր վարչական ամեն ճիւղ մէկ մէկ խորհրդական ունի, որ պատասխանատու է այս ժողովին: Այսօր ունինք այն զիւրութիւններն որ առաջ չունէինք, որ երեսուֆեանն է որ չկրնար ուղած խորհրդականին օձիքէն բանել, հարցում ուղղել և համար պահանջել ինչպէս ամեն խնդրոց նոյնպէս ալ դրամական խնդրոց համար: Հիմա քանի որ վարչական կազմակերպութեան նոր օրինաց համեմատ աւելի դիւրութիւններ ունինք, ինձ համար ընդունելի չէ ոչ փոփոխեան Էֆէնտի առաջարկը, ոչ ամսեայ և ոչ եռամսեայ հաշիւ բերելու գրութիւնն: Ոչ թէ անոր համար որ Աեդր. սընտուկը «քօնթօրի» պէտք չունի, այլ ինչպէս ըսի, քանի որ ամեն երեսուֆեան միշտ իրաւունք ունի ուղած հարցումն ընելու, մեծ կարևորութիւն չեն կրնար ունենալ, հաշուոց հրատարակութիւնները, ինչպէս որ անցեալ անգամ փոփոխեան Էֆէնտի դատարարութեան յատկապէս ամսականը շարուելուն համար հարցում ըրաւ. նոյնպէս ամեն պարագայի մէջ հարցման գրութեամբ կրնայ համար տանուիլ Վարչութեանէն: Իմ կարծիքս այս է որ ըստ որում Ազգային ժողովը ներկայ Վարչութեան վրայ վստահութիւն ունի, պէտք է ազատ թողուլ զայն՝ որ հարկ եղած ուղղութիւնը տայ վարչական գործոց, և խորհրդանչիւր խորհրդական կարենայ իւր ճիւղին վերաբերեալ կարգադրութիւնն ընել: Դեռ Չամիս չեղաւ որ ձեր նոր ընտրած վարչութիւնը գործի ձեռք դարկած է, համբերեցէ՛ք որ ամեն ինչ կարգադրելու ատեն ունենայ:

Ամբողջելով խօսքս կեղբակոյնեմ թէ քանի որ հարցապնդման օրինական դրութիւնը յարաբերակցութեամբ մեր ծաղովին մէջ, և քանի որ ըստ վարչական կազմակերպութեան նոր օրինաց խրատանչիւր ճիւղի Գործարարական անհատապէս սրատարտնասու է այս ծաղովին առջև, պէտք է թողուլ որ մինչև տարեգրութիւն երկուսոց և հաշուեցոց միտակցութեամբ ընդ ներկայէ, և այս պայմանաւ տրամ դոյնել այս խնդիրը :

**ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ.** — Վարչութեան 3 անդամներն իրարու ետևէ խօսեցան և տարբեր կարծիքներ յայտնեցին :

**Տ. ՄԱՏԹԷՈՍ ԵՊՍ.** — (Ընդմիջմամբ) Ես իրև երեւոյթիս խօսեցայ :

**ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ.** — (Շարունակելով) Տէր Մատթէոս կախկոյտ կըսէ, հարցապնդման իրաւունք ունինք ամեն բանի, նոյնպէս և դրամական խնդրոց համար, և առնով բաւականանանք. ևս ալ ճիշդ այդ իրաւունքը գործադրելու եղանակն է որ կառայարկեմ. վասն զի ուրիշ գիտնամ թէ Պիւտճէն ճշգրտութեամբ կը գործադրուի թէ ոչ. և կամ զեղծում տեղի չունենար: Տարի մը անց նեւէ և ամեն բան լինողէն ետքը պիտի դիտանք թէ այս խնջին շատ դրամ տրուեր է, և այն խնջին ալ բնաւ չէ տրուեր. ի՞նչ օգուտ ապէ, մանաւանդ երբ Վարչութիւնն ալ առեր բաւեր է. չգիտեմ ի՞նչ կայ որ կեղբ. անտուկին վրայ քող մը ծածկել կ'ուզուի: Թէ պէտ և չեմ ուզեր այս բանը մասնաւոր դիտմանց ընծայել, սակայն երբ ամսական հրատարակութիւնն վնասակար կը ցուցուի, թուանց փոստի, չեմ կրնար համոզուիլ, և ընդհակառակն կը պնդեմ թէ ոչ միայն վնասակար չէ, այլ օգտակար իսկ է վասնզի ամենուն վրատահութիւն կը ներշնչէ. ուրեմն կազմեմ ուշադրութեան առէք այս կէտք, և թէ որ փորձով անտեղութիւն մը երևան ելնէ, ան ատեն ևս դատենք: Իսկ Վարչութեան վրայ վստա-

հութեան կէտին դաւով կըսեմ, անփոստահութիւն ամենեկին մտքէս անգամ չանցնիր մանաւանդ նոր կազմեալ Վարչութեան վրայ, որոց գործերն այսուհետև պիտի տեսնենք. սակայն մեր վստահութիւնն ի՞նչ որ ալ լինի իւր վրայ. կեղբ. անտուկի հաշիւներն ամեն ամսագրութիւն հրատարակելու ստաշարիութիւնն այդ վստահութեան թերութիւն մը չկրնար համարուիլ. բանգի օրէնք մ'է որ պիտի հաստատուի, և ոչ այս Վարչութեան համար մտածուած ստեղծմանակեայ միջոց մը :

**ԵՆՈՒՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՖ.** — Փախաղեան է. Ֆէնտի կասկածները ցրելու համար կը յայտնեմ թէ արդի Վարչութեան վրայ բնաւ անվստահութեան կէտ մը չկրնար նշմարուիլ այն խնդրոց մէջ: Միայն սկզբունքի կէտ մը կայ, որոց վրայ Վարչութեան երեք անդամները հեղձեալ խօսեցան, բայց ոչ իւր Վարչութեան անդամ խօսեցան: Խնդիրը համար կան շահուց վերաբերեալ ըլլալով իւր վարչական խնդիր նկատելու տեղի չկայ. ապահով եղի որ արդի Վարչութիւնն դոյս վարչական խնդիր չընէր: Կան հաշիւներ, որոց հրատարակումն օգուտ կը գոյանայ, ինչպէս է կրթութեան ընկերութեանց և Սովետաց Մասնաժողովին հաշիւներն. իսկ Պատրիարքարանի սնտուկին գաղտնի ատրին միանգամ հրատարակուիլն աղէկ է: Ես չուզեցի այս կէտին բողոքարկութեան մէջ շատ յառաջ երթալ և ձեր ուշադրութիւնը միայն հրաւիրելով բաւականացուցի. իսկ Փախաղեան է. Ֆէնտի կը հարցնէ թէ տարին միանգամ ու ամեն ամիս հրատարակուելուն մէջ ի՞նչ տարբերութիւն կայ. ոյս, մեծ տարբերութիւն կայ տարին մէկ անգամ և 12 անգամ հրատարակութիւն ընելուն մէջ, մեր հիմակուած վիճակին նոյեւով տարին միանգամ հրատարակութեամբ բաւականանալու է, այս նիւթին վրայ ներելի չեմ համարիր սակեալի բողոքարկութիւն տալ:

Ուստի այս նկատումներով և Մեղիեան է. Ֆէնտի բարեփոխութեան համաձայն, որ ամսական հրատարակման խնդիրն աւարջիկայ

մայիսին յետաձգել արժան դատեց, կասալարկեմ մինչև մայիս 1 մեր սովորական վիճակը շարունակել անփոփոխ, և անկէ ետև նորէն խորհիլ այս կէտին վրայ, այն ատեն թերևս աւելի ընդարձակ կերպիւ խօսելու օրտտեհութիւն կունենանք, և կը համոզենք կամ կը համոզուինք :

**ՊԵՐՊԵՐԵԱՆ Ռ. ԷՖ.** — Փախաղեան է. Ֆէնտի ըսաւ թէ խնդրոց մէջ Վարչութեան վրայօք վստահութեան կամ անվստահութեան կէտ մը չկայ, բայց երբ հաշուէկընի խնդիր կը ծագի, արդէն խնջին կուգայ այդ վստահութեան կամ անվստահութեան կէտն: Փախաղեան է. Ֆէնտի ազահով լինելու և փորձելու համար թէ Վարչութեան վրայ գրուած վստահութեան մէջ խորուած ենք թէ ոչ, կառաջարկէ քննել և իմանալ թէ ելմտացոյցը ճշգրտութեամբ կը գործադրուի. բայց ևս կըսեմ, արդէն միջոցներ ունինք տեղեկանալու. զի ի՞նչ է ելմտացոյցն, եթէ ոչ ցուցակ մը հաստատուի և ծախուց, զոր Վարչութիւնը կը բերէ, և մեր իրաւունք ունինք դոյն կէտ առ կէտ քննադատելու, և երբ պէտք եղած քննութեանէ ետև, անոր ամեն մէկ ճիւղին ճշգրտութեանն ու կարևորութեանը վրայ համոզում գոյացնենք, այն ատեն կը բուէարկենք և կը յանձնենք Վարչութեան առ ի գործադրութիւն, և այս կերպով վստահութիւն կը գոյանայ, ու կը հասկնանք թէ ո՞րչափ հատոյթ կը հաւաքուի և անոնք ի՞նչ պիտոյքներ գոհացնելու սահմանուած են: Պիտի ըսուի թէ ի՞նչ միջոցաւ կրնանք իմանալ եթէ տեղաբնակները չքննենք՝ թէ այն ծախքերն՝ որ ելմտացոյցին մէջ որոշուած են, ճշգրտութեամբ ի գործ կը դրուին թէ ոչ: Ես կըսեմ թէ տեղաբնակներն չէ որ պիտի հասկնանք դոյդ, այլ ազգին վիճակէն՝ զոր աչքով կը տեսնենք, և աչքով տեսածնիս տեղաբնակներու մէջ չենք տեսներ: Օրինակի համար, երբ ելմտացոյցին մէջ կրթական այս խնջ հաստատութեան համար ծախք մը կամ գումար մը յատկացած է, հարկ չկայ տեղաբնակները քննելու և հասկնա-

լու թէ այդ ծախքը ճշգրտութեամբ հատուցուած է, այլ այն հաստատութեան վիճակէն կը հասկընանք թէ Վարչութիւնն իր խոստացածը կատարեր է թէ ոչ, և երբ չէ կատարեր, այն ատեն պատճառը կը հարցնենք: Ուստի հարկ չկայ Վարչութիւնը պարտաւորել ամէն ամիս հաշիւները բերել ցուցնելու. ասի ամենամեծ անպատուութիւն է Վարչութեան մը համար, և ևս թէ որ Վարչութեան անդամ ըլլային, անմիջապէս կը հրաժարելի ասանկ պարագայի մը մէջ:

Արդ, քանի որ աղբին վիճակն ունինք մեր աչքին առջև իր տեղեկութեան միջոց, այլ ևս պէտք չմնար այն թղթի կտորին, զոր Վարչութիւնը պիտի ներկայէ մեզ ամէն ամիս, անոր մտից ու ելից կողմերը մէյակէկ թուանշաններ նշանակելով և գումարները հաւաստարկիւ բերելով:

**ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ.** — Մեր ինչ որ գործեր ենք՝ այդ անսահման վստահութեան յայտարարութեամբ և սաշտօնեաները չվիրաւորելու խորհրդով գործեր ենք, և միշտ վնասներն տեսեր ենք. և ցուալին այն է որ իրաքանչիւր որ իր անձնական փորձառութեամբ կուզուանիլ թէ այս ճամբան լու չէ. սակայն պէտք է քիչ մ'ալ իրողութեանց ուշադիր լինել, և արդէն եղած փորձերէն օգուտ քաղել: Սահմանադրութեան հաստատութեան 17-18 տարի ետքը հազիւ թոյլ տուին մեզ բուէարկել կեղբ. անտուկի ելմտացոյցը: Այժմ ալ երկու տարի կըլլայ տակաւին լրացուցիչ ելմտացոյց այն է անցեալ հաշիւները չեկան, որ գիտնանք մեր բուէարկած ելմտացոյցին արդիւնքը: Ար տեսնէք թէ դրամական խնդրոցն մէջ, որ ծաղովիս հական սրտաժոններէն մին է, ո՞րչափ յետաձգուաներ տեղի ունեցած են: Այս ծաղովս միշտ սահմանաւոր է, և Վարչութիւնն ալ միշտ խոստացած է՝ բայց չէ բերեր, ուրիշ բաներ բերեր և յետաձգել տուեր է դոյն: Անգամ մը այս ծաղովին մէջ թէ այսուր՝ մեր ընկերներէն մին՝ կարծեմ Գորտասնձեան Ալիքսան է. Ֆէնտին, ըսած է թէ Անդղիոյ բարլա-

մէջ թիւն մէջ մէկ շրջանի համար ահադին վիճարու-  
նութիւններ կը լլան . այդ մեծ սպիտակ այդրան  
մեծ կարեւորութիւն տուած է մէկ շրջանին Յ  
ըստուշին . իսկ մենք հաղորաներով սակիներ  
բուն ինչ ըլլալը հարցուցած և փնտուած չեմք ,  
և երբ այժմ կտառաշարիսի գէթ պարբերա-  
բար հարցնել և փնտուել մեր Աեդր . սնտուկին  
վիճակը . մեր դէմ կը հանեն վստահութեան  
խնդիր մը , որուն համար ցարդ շատ բաներ  
վրայ տուած ենք : Բայց սակէ ետքն ու պէտք  
է որ տանք . միմէ այս ժողովը միայն ընտ-  
րող է , և ո՛չ երբէք համարուու : Ար յիշեմ  
թէ անգամ մը Մտեխան փաշա այս ժողովին  
մէջ յայտարարեց թէ Երեւոյնիսանութիւնն  
պէտք է որ համար սանու իր պաշտօնեաներէն  
և այս զանցատու թիւնս աններելի է իրեն :  
Ան ստեղծ ու ըսի , այժմ իսկ կը լլան . երբ ուն-  
մարաւութեան խնդիր կը յարուցուի ստա ,  
զանազան հնարքներով կը խտրանուի այն ,  
կամ ապարդիւն կը թողուի : Ինչ է պատճա-  
ռն որ այս վիճակէն չեմք կրնար ազատուի , և  
մեր ձեռքն ու ոտքը կտառուած կը տեսնեմք ,  
և ամենէն ուշիմ երեսօտիսանք անգամ զերծ  
չեն լինիր այս վիճակէն : Թողունք տարեկան  
համարաւութիւնն , որ գրեթէ իր նշանակու-  
թիւնը կորուսած է , հարցմա՛ր կամ հարցա-  
պընդմամբ համարաւութիւնը սը կարեւոր տեղ  
մը բունած չեն տակաւին : Արդ ամեն երես-  
փոխան արդարեւ իրաւունք ունի հարցում կամ  
հարցադիտում ընելու . բայց պէտք ունի մի-  
անգամայն ճիշդ տեղեկութիւններ քողել :  
Պէտք է րեւան Էֆէնտի կըսէ թէ տեղեկութիւն  
տանելու միջոցներ չեն ստակիր . այս խօսքն  
ընող բարեկամս կը հարցնեմ թէ ինք ե՞րբ և  
ի՞նչպէս խնայու թէ վճարուած չէ Պիւտճէին  
մէջ դատարարութեան համար որոշեալ 30  
հազար զարուշի գումարն , որուն համար ինք  
բիչ է՝ 100 հազար ըլլալու է ըսած էր և մեր  
Ա . անգամին նոյն գումարին վճարմամբ սը  
գոն լինիլ յորդորած է ինք զինքը . Աարչու-  
թեան կրկին և կրկին յայտարարութեանց և  
խտտմանց վրայ ո՛վ կը յուսար թէ բնաւ վը-  
հարուած չէ , եթէ Ռու խորհրդոյ մասնակի

համարաւութիւնը չգար և չհաստատուի զայդ .  
միմէ երեսօտիսանք փողոցներէն տեղեկութիւն  
սխտի հաւարեն . և անոնց վրայ հիմնելով կըր-  
նա՞ն խնդիր յարուցանել Արդ . Թողովին մէջ ,  
մանաւանդ գրամական խնդիր , որ հաստա-  
կայ գայթակղութիւն տալու գիւրթին միջոց մ'է :  
Այս սրտաճատաւ ուրիշ ամեն բանէ աւելի կա-  
րեւորութիւն տալի այս խնդրոյն և այդ սաւա-  
ջարկութիւնն բերի , ինչպէս նաև Գոտական  
խնդրոյն համար . երկուքն սը էական և կեն-  
սական : Մինչև ե՞րբ լուենք սխտ չվիրաւու-  
րելու համար . և վստահութիւն յայտարարելն  
մեզ անձանով գործոց համար : Ես որքան ու-  
րիշի վրայ վստահ ըլլամ , սակայն իմ քսակս  
անոր չեմ կրնար յանձնել որ զայն գործածէ  
ստանայ իմ գիտութեանս . ազգը դիւ երեսօտ-  
իսան է ընտրել , ազգային բաւիը կը հանեմ  
և կը յանձնեմ Աարչութեան որ այս ինչ ե-  
զանակու զայն գործածէ . ուրեմն միշտ աչ-  
քս վրան լինելու է որ դիտում թէ ի՞նչ կըլ-  
լայ . Աարչութիւնն ամեն բան ընելէն՝ տալն  
և անենէն ետեւ , սխտի ելնեմ համար սրա-  
հանջեմ եղեր . բայց թէ որ նա որոշեալ ծախ-  
քէն աւելի բան տուեր է մէկուն , ի՞նչ սխտի  
ընելք . օրինակի համար՝ սրաշտօնից ամսական  
15 հազար զարուշ որոշեր ենք և եթէ նա 3  
հազար զարուշ աւելի տուեր է , սխտի կըր-  
նա՞նք այդ աւելորդն իր քսակին վճարել տալ  
իրեն . տուէր այս որոշումը , ես այն ամեն  
աչքա գոց կտարաւեմ մինչև տարեկալս : Սա-  
կայն յիշեցէր որ Տարեկալսը շատոնց անցու-  
և ուրիշ մ'ալ կը մօտենայ , և դեռ հաշուեցոյց  
չբերուեցու . անցեալներս յիշեցուցի թէ ո՛ւր  
է հաշուեցոյցը , բայց ցարդ տակաւին չը բեր-  
ուեցու . չեմ գիտեր՝ տակաւին ո՞րչոտի ա-  
տեն շտխտի բերուի : Այս յետաձգումներուն  
պատճառաւ է որ այս անգամ աւելի գործնա-  
կան միջոց մ'աւաջարկեցի . ես մինչև իսկ  
կ'ընդունիմ եւամեայ հրատարակութիւնն , զոր  
Աարչութիւնը կ'աւաջարկէ . զի գիտեմ թէ  
մօտաւոր հրատարակութիւնը որչո՞քի օգուտ  
սխտի բերեն Աեդր . սնտուկին , և ի՞նչ վնաս-  
ներէ սխտի ազատին :

**ԳԱՓԱՄԱՋԵԱՆ Մ. ԷՖ.** — Փափազեան  
Էֆէնտի խօսքերէն կը մտաբերեմ որ իր նը-  
պատակն ուրիշ բան չէ , բայց եթէ ընդհա-  
նար վստահութիւն յառաջ բերել ազգին ելմ-  
տական վիճակին վրայ , և չունդէր իւր ստա-  
ջարկութեան վրայ՝ եթէ ուրիշ բանաւոր մի-  
ջոց մը ցոյց տրուի իր նպատակին հասնելու  
համար : Ինչ բան որ տեսականին մէջ կրնայ  
մեզի դիւրին երևնալ , զարմանալի չէ որ  
գործադրութեան մէջ իր դժուարութիւններն  
ունենայ : Ես ալ կընդունիմ որ նստածեւ  
նստեան դիւանին բերած աւաջարկութիւնը  
գործադրութեան մէջ իր դժուարութիւններն  
ունի , ստախ կարծիքները հաշուեցնելու հա-  
մար կտառաշարիկով արտօնել երեսօտիսաններն  
որ սըսած ստեղծելն երթան սնտուկին վիճակը  
նային , և եթէ ելմուցոյցին հակառակ բան  
մը տեսնեն՝ հոս խնդիր բերեն :

**ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ.** — Իմ նստակին ա-  
ւաջարկութիւնս է այդ . բայց ես Աարչու-  
թեան աւաջարկած եւամեայ հաշուեւտու-  
թիւնն սը կընդունիմ ըսի :

**ԵՆԻՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ.** — Ես շատ գո՛ւ եմ  
որ այսօր տեղի ունեցու այս դրամական խըն-  
դիրը . եթէ ուրիշ ժամանակ ըլլար՝ թերեւ  
անձնական նկատումներ մէջ բերուէին : Փա-  
փազեան Էֆէնտի տուած բացատրութիւնները  
խնդրոյն կարևորութեան նկատմամբ շատ ի-  
րաւացի են . իբր դրամական խնդիր կարծէ  
ինչ որ ըսենք , և մեր ժամերն ի դուր վա-  
նած չենք ըլլար զայն յուզելով : Միայն թէ  
ինչպէս արդէն ըսի , խնդիրն սկզբունքի վրայ  
է , և տեղի չկայ վարչական խնդրոյ կերպա-  
բանք տալու կամ վստահութեան և անվստա-  
հութեան խնդիր յարուցանելու , փոսն զի ա-  
ւաջարկութիւնը արդի Աարչութեան նկատ-  
մամբ չէ , այլ իբրև ընդհանուր կանոն բոլոր  
գողիք վարչութեանց նկատմամբ է : Քննենք  
նախ՝ թէ աւաջարկութեան եզանակը մեր  
այսօրուան վիճակին կը համաձայնի՞ . զի այն  
բանն՝ որ այսօրուան վիճակնուս մէջ անտե-

ղութիւններ ունի , կրնայ վաղը խիստ սրտա-  
շաճաւոր ըլլալ : Ես չեմ ուզեր այս կէտին մէջ  
այն մանրամասնութեանց մէջ մանել , զորս  
Փափազեան Էֆէնտի յառաջ բերաւ , և որոյ  
Պէտքերեան Էֆէնտի լուս պատասխանեց :  
Փորձը միայն սխտի ցուցնէ թէ արդի Աարչու-  
թիւնը պէտք եղած տուն համարաւութիւն  
սխտի ընէ : Եթէ Պիւտճէին մէկ կէտը չգործա-  
դրուի , կամ հակառակը գործադրուի , կար-  
ծեմ՝ ստոր պատասխանատուութիւնը ամենէն  
աւելի Աարչութեան վրայ սխտի ծանրանայ ,  
զի այն Պիւտճէն բերաղը նոյն խնդրն Աարչու-  
թիւնն է : Սակայն Աարչութիւնը ինք միայն  
կրնայ գիտնալ թէ ի՞նչ պէտքեր ունի այսօր-  
ուան վիճակին մէջ , և ըստ այնմ իր Պիւտճէն  
սխտի բերէ և իր պէտքերը ցոյց տայ : Թող-  
վը կրնայ ըսել թէ այս ինչ զուլին այս տարի  
զանց ըրէ , և այն ամեն Աարչութիւնը այն-  
պէս ընելով ինքը կազատի պատասխանատու-  
ութենէ . բայց բան մ'ալ կոյ որ Աարչու-  
թիւնը չկրնար զանց ընել և սխտի ըսէ թէ  
ստանց նոյն ծախքն ընելու ես չեմ կրնար  
պաշտօնս շարունակել :

Փափազեան Էֆէնտի հարցոյց թէ ի՞նչ  
կրնանք ընել Աարչութեան՝ թէ որ Պիւտճէին  
որոշածէն աւելի ծախք ընէ . ես կը սրտատու-  
խանեմ թէ ի՞նչ ընելիքն յայտնի է . Աար-  
չութիւն մ'ունիք այսօր՝ սրոյ խրատանշիւր  
պաշտօնեայն իր ճիւղին համար պատասխանա-  
տու է անհաստաղէս . հետեարար եթէ Աար-  
չութեան միւս անդամներն որոշեն Պիւտճէն  
դուրս նոր ծախք մը ընել , Տնտեսական Խոր-  
հորդական կարող է բացարձակապէս մերժել :  
Իսկ եթէ ինքն ալ համակերպի և վճարէ , այն  
ստեղծ ըսել է թէ Աարչութիւնը այդ արտա-  
բոյ կարգի ծախքը ընելու պատասխանատու-  
ութիւնը վրան կառնէ , վստահ ըլլալով . որ  
սխտի կարենայ ինքզինքն արդարացնել Ազգա-  
յին Թողովոյ առջև : Ապա թէ ոչ յայտնի է  
թէ ամեն Սահմանադրական ազգաց մէջ եղա-  
ծին նման սխտի վարովնք : Անոնք որ Պիւտ-  
ճէն դուրս ստակ կը վստանեն պէտք է ստա-  
ծեն :

Ուստի սրտապ տեղ անցելոյն զերգմանց վրայ խօսելով ժամանակ շփատները : Ես իմ մասին չեմ կրնար մենէ առաջ եկող դասող վարչութիւնները պոխտարակել Պիւտնէին ոյս կամ այն մասը շարժողութիւնը ըսելով . կրնան այնպիսի պատճառներ ունենալ որոցմով թե-րեւ գիրենք արդարացնեն : Բայց թէ որ թե-րութիւն մ'ալ ունեցած են , ես ասոր սրտ-ճառն աւելի հին դրութեան կը վերընծայեմ , այն դրութեան՝ որ այսօր փոխուած է և սրտասխանատուութիւններն ուրիշ կերպարանք առած են : Իսկ եղած վիճարանութենէն հե-տեցնել թէ ամեն ամիս հաշիւ հրատարակելու դրութեան արդի Աւրչութիւնը դէմ է , սնտու-կի հաշույն վրայ քօղ ծածկել կուզէ , հարկ չէ ըսել թէ անհեթեթ եզրակացութիւն մը նէ , քանի որ Փախաղեան էֆէնտի ինքնին յայտա-բարեց թէ այն խնդրոց մէջ Աւրչութեան երեք անդամներն խօսք ասին և երեքն ալ տարբեր կարծիքներ յայտնեցին և մասնաւո-րապէս Տնտեսական Խորհրդականը սկզբունքը չմերժեց :

**ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ** — Ես կընդունիմ Փախաղեան էֆէնտի առաջարկութիւնն և ամենին խորշելու բան չիկայ անոր մէջ , թող ամեն օր հրատարակուի սնտուկին վիճակը և եթէ ինք շառաջարկէր , ես պիտի առաջարկ-էի , և ոչ թէ ամեն ամիս , այլ շաբթէ շաբաթ թող հրատարակուի , որպէս զի ազգը խնայ թէ ի՞նչ է իր Պատրիարքարանին տուածը միւս ազգաց իրենց Պատրիարքարանին տուած-նուն բաղդադմամբ :

Այս առթիւ կուզեմ զխանայ թէ ե՞րբ պի-տի գոյ այն խնդրոցն կարգը , որոյ համար եկած եմ այսօր պէտք եղածը խօսելու . Փախաղեան է-ֆէնտի հարցապնդման խնդիրն է ըսածս , զոր ինծի դէմ ուղղեր էր դատարակութեան համար ստակ չէ արուած ըսելով , և որուն համար պատասխան մը դրկած էի , բայց ինչ-պէս կը լսեմ , ժողովին մէջ չէ կարգացուէր : Մեր քողարկելու բան մը չունինք : Թող ամեն բան հրատարակուի , և գիտցուի թէ մեր

Պատրիարքարանն ինչ նեղութեամբ և տառու-պունօր իր ծախքերը կը հոյթայթէ : Երբոր տեսնէք Պատրիարքարանի այժեան ունեցած ընդարձակ յարաբերութիւններն և փոխանակ-ուած թղթակցութիւններն , և այս պատճառ-ներով եղած ծախքերն , երբ տեսնէք թէ՛ կա-րեար ճիւղի մը քարտուղարը ամսականը քիչ ըլլալուն պատճառաւ հրաժարած ատեն Պատ-րիարքարանը չիկրցաւ նորա տեղ ուրիշ մը գտնել , զրամի պակասութենէն , չպիտի զարմանար թէ ինչո՞ւ դատարակութեան համար ստակ չէ կրցեր արուիլ : Ես այն ու-տենները երբ դատարակութեան համար կեդր. սնտուկէն գումար մը տալ կառաջարկ-ուէր , ըսած եմ թէ այդ գումարը բիշ է , սակայն սուայժմ բուական է ըսողներ եղան , թէ փարձ մ'է թող ըլլայ , և Պիւտնէին մէջ գումար մը յօրինուի , այդ գումարը մինչև ցարդ չի արուելուն պատճառը ահա այս է , և ոչ ուրիշ որ և իցէ գիտում :

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Սրբազան Հայր , ձեր ստատած խնդիրն Օրակարգին երկրորդ խնդի-րն է , որուն կարգը հիմայ պիտի գոյ , երբ այս խնդիրը վերջացնենք , որ արդէն վերջա-նալու մօտ է :

Այս միջոցին Փախաղեան էֆէնտի իր ա-ռաջարկը բարեփոխելով կը ներկայացնէ ստո-րագրեալ նաև բանի մը երեսփոխաններէ . նոյն բարեփոխեալ առաջարկը կը կարգացուի , որ է .

**Տնտ. Խորհրդականին առաջարկու-թեան համաձայն ներկայ 80—81 տար-ւոյն հաշուեցոյցը Մայիս 15 ին սպասել Աւրչութենէն , որ անշուշտ արդէն հաս-տատեալ ելմտացոյցին համաձայն պի-տի ըլլայ , և յառաջիկայ Մայիս 1 էն ամեն եռամիս կեդր. սնտուկին հաշուե-**

ցոյցը ներկայուի Երեսփոխանական Ժո-ղովին :

Եւ եթէ որոշեալ ժամանակին չներ-կայուի , Համարակալութեան գիււանն ի-բաւունք ունի կեդր. սնտուկին հաշիւը քննելու :

- Ս. Գ. Պ. ՓԱՓԱԶԵԱՆ      Տ. ՓԱՓԱԶԵԱՆ
- Ն. ԱԼԱՃԱՃԵԱՆ      Գ. ՎԱՐԴԱՆԵԱՆ

**Հ. ՍԱՐԳՔԷՇԵՇԵԱՆ**

**ՄԵԼԻՔԵԱՆ Գ. ԷՖ.** — Այդ առաջար-կութեան վրայ երկու խօսք պիտի ընեմ . ա-նոր վերջին կէտը չեմ կրնար ընդունիլ : Զի քանի որ պարտաւորեալ եմ հաշիւ բերել , ե-թէ ժամանակին չբերի ի՞նչ հարկ Համարա-կալութեան Գիււանին երթալ քննել . անմիջա-պէս հարցում կընէք , և եթէ չկրնամ ինք-զինքս արդարացնել , անվստահութեան քուէով մը կը ձգէք զիս ստատածէս :

**ՓԱՓԱՅԵԱՆ Ս. ԷՖ.** — Կուզէք նէ այդ կէտն ալ կը վերցնեմ :

**ԱԼԱՃԱՃԵԱՆ ՆԻԿՈՂՈՍ ԷՖ.** — Ո՛չ վեր-ցնել չըլլար , ինչպէս որ ատրազքեցիներ , նոյն անփոփոխ պէտք է մնայ :

**ՓԱՓԱՋԵԱ Ս. ԷՖ.** — Փոքր զիջումներով մեծ նստատակի մը կրնանք հասնիլ , ամեն բան աստիճանաբար կըլլայ :

**ՄԵՐԵՇՄ—ԳՈՒԼԻ Յ. ԷՖ.** — Իրր տեղե-կարբեր Նախաձեռնութեան Գիււանի եթէ չխօ-սեցայ ցարդ մեր տեղեկագրին եզրակացու-թիւնը ստատուանելու . պատճառներէն մին էր որ թէ Երեսփոխան էֆէնտիին ըրած առար-կութիւնը , հաշուոց հրատարակութեան դէմ , և թէ Փախաղեան էֆէնտիի պնդելը , հաշուոց

պարբերաբար հրատարակութեան վրայ . զատ զատ երկու սկզբանց խնդիրներ էին , երկուքն ալ անժխտելի , և իբր այն՝ անտրանալի կա-րեւորութիւն ունէին :

Այժմ Փախաղեան էֆէնտին զորս երես-փոխանաց հեռ միտքան տեղեկագրին եզրա-կացութիւն չափաւորելով , հրատարակութիւն բառը կը վերցնէ և կեդր. սնտուկի հաշուոց ամեն եռամիս Աւրչութեան կողմէ ժողովոյս ներկայացուիլը կառաջարկէ . և կը յաւելցնէ որ եթէ Աւրչութիւնը չբերէ ժամանակին , Համարակալութեան Գիււանն իրաւունք ունե-նայ երթալ քննելու :

Տնտեսական գործոց Խորհրդական էֆէն-տին ալ , այս վերջին մասը կը մերժէ , և երբ հաշիւները չգան , կըսէ , կարող էք ուղղակի ինձ հարցում ընել և ի հարկին զիս ստատածէ ձգել :

Սակայն կուզեմ դիտել տալ որ կարծիք-ները հաշտուելու վիճակին հասած են արդէն : Եւ զայս լու հասկնալու համար պէտք է գիտ-նալ որ հաշուոց հրատարակութիւն ըսելն ու ժողովին ներկայել ըսելը տարբերութիւն մը չունին հետեւանքին մէջ , այն առարկութեան նկատմամբ զոր կընէր Երեսփոխան էֆէնտին , ժողովին ներկայացեալ հաշիւն ատենագրու-թեանց մէջ կը տպուի , և ամեն օր կը կար-գոյ դայն ինչպէս պիտի կարդար որ և է տար-բեր ձևով հրատարակուած ատեն : Ի վերայ այս ամենայնի , ի՞նչ է Աւրչութեան համար եղած առարկութիւնը . — Աւրչութիւնը սրտ-ճառներ պիտի ունենայ անպատեհութիւն նըշ-մարելու հաշուոց հրատարակութեան մէջ . խիստ լաւ : Ուրեմն երբ ընդունուի վերոյիշ-եալ հինգ երեսփոխանաց առաջարկած բարե-փոխումը , որ հաշուոց հրատարակութեան մա-սին սկզբան տարբերութիւն մը չունի Նախա-ձեռնութեան Գիււանի տեղեկագրին եզրակա-ցութենէն , ըստ այնմ՝ ամեն եռամիս Աւր-չութիւնը պիտի բերէ ներկայէ կեդր. սնտու-կին վիճակը , և այն անդամուն որ անպատե-հութիւն նշմարելու պատճառ ունենայ , չպիտի ներկայէ դոյն . համարակալութեան Գիււանն

ալ պիտի երթայ քննել և համարուի որ բանաւոր պատճառներ ունի եղեր Վարչութիւնն որոշեալ ժամանակին հաշիւը չհրատարակելու, և պիտի դոյ վատահայնէ զԺողովն, եթէ հարկ լինի: Խնդրոյն դորձնական հետեւանքն երբ այսպէս նախատեսենք առաջարկեալ բարեփոխութեան վրայ չհամաձայնելու պատճառ չենք դռներ: Եւ ահա ևս ալ այս պատճառներով չեմ պնդեր՝ իբր տեղեկագրեր՝ մեր եղբարհայութիւնն անփոփոխ պահելու վրայ և կընդունիմ առաջարկեալ բարեփոխումը:

**ՁԱՅՆԵՐ. — Քուէ բուէ:**

Վիճարանութիւնը կարգուի և Առեւնապետ էֆէնտին զատելով առաջարկեալ բարեփոխման վերջին մասը քուէի կը դնէ զոր Ժողովը միաձայն կը ընդունի: Իսկ առաջարկութեան վերջին մասն, որ Համարակալութեան Գլխանին քննութեան կը վերաբերէր, քուէի դնելու հարկ չմնար, վասնզի ոչ որ կը պնդէ անոր վրայ:

Բ.

ՉԱՐԱՊԱՆԱԳԻՐ Ս. ՊԱՏՐԻԱՐԿ ՀՕՐ Ի ՎԵՐԱՅ  
ՀԱՐՑԱԳՆԴԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ ԷՖԷՆՏԻՆ

ՇՆԼԻՔԵԱՆ Պ. ԷՖ. — Հարցապնդում մը կայ Փախաղեան էֆէնտի կողմէ դատարարակութեան խնդրոյն համար, զոր Սրբազան Պատրիարքն ինձ յանձնած է պատասխանել: Պիտի ջանամ որչափ կարելի է զոհ ընել ժո-

ղովն այս մասին: Փախաղեան էֆէնտի իր հարցապնդումները կուզէ խմանալ թէ դատարարակութեան համար որոշեալ գումարն ինչո՞ւ չէ վճարուած, և թէ ստո՞յգ է որ վերջին Քաղ. Ժողովն մինչդեռ անցեալ Մայիս մէկէն 2500 տկան զուրուշ վճարել խտտացած էր, յետոյ ըսած լինի թէ սխալած է իւր ոչ յայտարարութեան մէջ, և ես աւան լինի նոյն որոշումը:

Ստոյգ է որ Ս. Պատրիարքն և վերջին Քաղ. Ժողովն Աստուծոյ խորհրդոյ հետ համար խորհուրդ ջանացեր են 2500 զուրուշ ամսական վճարել դատարարակութեան համար, սուկայն իրենց ջանից հակառակ չէ կրցեր վճարուիլ ինչո՞ւ համար. վասն զի այդ 2500 զուրուշի վճարման որոշումն այնպիսի ժամանակի մը հանդիպեր է յորում՝ Կեդր. սնտուկը մեծ դժուարութեան մէջ է եղեր, և մինչև անգամ հեռագրերու ծախուց համար մասնաւոր փոխառութեանց զխմել ստիպուեր են: Եւ մտախաղէրներու դադարումն է Կեդր. սնտուկին այս տագնապին պատճառը որու երեսէն 80 հազար զուրուշի չափ մնաս կրած է Կեդր. սնտուկը, և ստիկայ տեղի առած է սրբաուց դոյացման: Իրայ այս վիճակին մէջ միայն մէկ կարելի միջոց կրնայ եթէ զարգիւց այդ 2500 զուրուշ ամսականը վճարելու, այն է փոխառութեան զխմել, բայց այս չէ եղած անշուշտ՝ զի Կեդր. սնտուկին զխառուր աղբիւրներէն մին սրակսած լինելով ոչ միայն վճարման հաւանականութեանը կը պակսեր, այլ նաև փոխառու գտնելու կարելութեանը: Ըսել է թէ 2500 զուրուշ ամսականին չվճարման պատճառն ոչ—կամեցողութիւնը չէ, ընդ հակառակն ամեն ջանք ի դորձ դրուեր է, բայց կարելի չէ եղեր վճարել:

Իսկ զայով Փախաղեան էֆէնտի այն յայտարարութեան թէ Քաղ. Ժողովը վճարման որոշումը տալէն յետոյ ետ է առեր իր այն որոշումն սխալեցանք ըսելով, ես վարչական արձանագրութիւնները քննելէ ետե ի պաշտօնէ կըսեմ թէ Քաղ. Ժողովոյ կողմէն այդ-

պիտի յետս կոչման յայտարարութիւն մը չըկայ. ընդհակառակն 2500 զուրուշի անխափան վճարման համար Տնտես. Խորհրդոյ և Ելմ. Հոգարարութեան գրուած Պատրիարական սրտասնագրերը կան ու կը կենան անջընջելի: Այս կէտն ալ ստույգոյ մ'է որ թէ Ս. Պատրիարքը և թէ վերջին Քաղ. Ժողովը փոյթ տարեր են դատարարակութեան յատկացեալ այդ 2500 զուրուշի գումարն ամսական վճարել, բայց չեն կրցեր յաջողիլ:

Այսու ամենայնիւ կրնամք այժմ՝ միութարուիլ տեսնելով՝ որ ներկայ վարչութիւնը փութացած է դատարարակութեան համար վճարման սկզբնաւորութիւն մ'ընել. վասն զի այսօր կարողութիւն ունի Կեդր. սնտուկը վճարել դատարարակութեան յատկացեալ գումարն, և 80 մայիս մէկին սնտուկին վիճակն ինչ որ էր հիմա նոյնը չէ:

Կը յուսամ որ այս բացատրութեամբ գոհ կը լինի Ժողովն, ինչպէս նաև Փախաղեան էֆէնտին, և աւելի բացատրութիւններ տալու հարկ չմնար:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Նախորդ վարչութեան Տնտես. Խորհրդոյ անդամ Մելիքեան Քարեղին էֆէնտի պատասխանը լսեցիք, որ խնդրոյն արտաբին սակեղծեալ կողմնէ: Ես խնդրոյն խորը շարժի մտնեմ. միայն մէկ երկու կէտ կայ իր բացատրութեան մէջ, անոնց պիտի պատասխանեմ:

1880 մայիս մէկին Կեդր. սնտուկն անձկութեան մէջ է եղեր, մինչև իսկ հեռագրի վճարման համար դրամ չգտնուիր եղեր, ուստի այդ պատճառաւ դատարարակութեան յատկացեալ ամսականը չէ վճարուեր: Ամեն մարդ գիտէ թէ, մեծ սրտէքէն սխեալ մինչև առջի սրտի հարսնիք չլինիր, հրամանի չարտիր, նշանաւորութիւն նուազ կը լինի, և տարբ չըհաւարուիր, հետեւաբար Կեդր. սնտուկը ամեն ատեն նոյն միջոցին նեղ վիճակ մը կատանայ մասնաւոր սրտար ալ կը դոյանայ: Այդ անձկութեան մէջ ո՞վ պէտք է գրկել. — բնականաբար լեղու չունեցող մէկը, ուստի դատար-

արակութեան պիտոյքը գրկեր են. նոյնպէս գաւառական այցելութեան և հովուութեան պիտոյքը գրկեր են. զի երկուքն ալ լեղու ևս պաշտօնանց չունին Պատրիարքարանի մէջ. իսկ պաշտօնանցը թախանձելով իրենց ամսականները կորցրեր են, ինչպէս և այլ ամենայն ծախք վճարուեր են: Իրայ այս վիճակին մէջ միթէ կարելի է հաւատալ թէ ոչ — կամեցողութիւնը չէ սրտածաւ դատարարակութեան գումարն ոչ վճարման, և թէ ամենայն ջանք ի դորձ դրուած լինի այդ վճարման մասին: Ժողովը կընտայոցը քուէարկած ատեն 510 հազար զուրուշի ծախուց գումար մը նշանակեց, որոյ մէջէն 30 հազար զուրուշ պահեստի դրամ էր: Մարտ ամսոյ մէջ էր՝ դայի Կեդր. սնտուկին վիճակը տեղեկացայ և տեսայ որ կընտայոցի դորձագրութեան օրէն մինչև այն օրը 420 հազար զուրուշի մաս գումար մը մը տած է Կեդր. սնտուկը. ճիշդ նոյն միջոցին էր որ իրմախաղէրի հասցիքը դադրած էր, և ետքը նորէն այդ հասցիքը դադ սկսաւ. որ չեմ կարծեր թէ մեծ բաց մը թողած ըլլայ նոյն հասցիքին եթէ աղբեալ գումարին մէջ:

ՍՐԲԱՋԱՆ ՊԱՏՐԻԱՐԿ — Բայց գիտէ՞ք սրչափ հոգ և աչքի ըյս թախած եմ՝ այդ լրմախաղէրի խնդիրը կարգադրելու համար:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ձեր սրտորը կատարած էք, ատոր համար շնորհակալ ենք:

ՍՐԲԱՋԱՆ ՊԱՏՐԻԱՐԿ — Ես շնորհակալութեան պէտք չունիմ, երանի թէ ամենքն ալ իրեանց սրտորը կատարէին:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Այո, այսպիսի սրտարներն ամենքն ալ կատարած են: — Ալ չեմ գիտեր թէ մարտ ամսէն մինչև մայիս մէկ սրչափ հասցիք դոյացաւ: Մեր մութին մէջ կը խարխալինք. ճիշդ թաւանջաններն չունինք այսօր ձեռքերնիս սնտուկը մը տած ու ելած գումարներուն. հարկաւ Մելիքեան էֆէնտի խտտացած տարեկան հաւուցեցողը դոյ նէ պիտի տեսնենք, և այն ա-

տեն աւելի զիւրաւ պիտի բաղդատենք իր ար-  
դի յայտարարութիւնն սնտուկին իրական վի-  
ճակին հետ :

Սակայն պէտք է նկատել թէ Կեզր. սըն-  
տուկին 400—420 հազար զուրուշի հասոյթ գան-  
ձած ստեղծն զաստիարակութեան համար գանկ  
մ'իսկ վճարած չէ . ինչպէս նաև գաւառա-  
կան ուղեւորաց և հովութեանց պիտոյից հա-  
մար . մինչդեռ ըստ բուէարկեալ Ելմտացոյցի՝  
հասոյթին 20 առ 1/10 ին համեմատութեամբն  
այդ երկու մեծ ու կարևոր պիտոյից համար  
գումարներ սահմանուած ըլլալով, մինչդեռ  
տնցեալ մարտ ամիս 40—42000 զուրուշ գա-  
տիարակութեան և 40—42000 զուրուշ ալ  
գաւառական ուղեւորութեանց և հովութեանց  
համար ծախք վճարուած պիտի ըլլար : Նկա-  
տելի է նաև թէ այս երկու պիտոյներէն  
գուրս մնացեալ պիտոյից համար Կեզր. սըն-  
տուկին մասնաւոր փոխառութեան հարկը տե-  
սեր, և առանց փորանման գործադրեր են,  
իսկ զաստիարակութեան և գաւառական ուղե-  
ւորութեանց համար վտրաներ, և չեն համար-  
ձակեր փոխառութեան զիսել, միայն վճար-  
ման հրամանագիրներն բաց պահեր են և չեն  
փակեր, որ արդարանալու միջոց ըլլայ, թէ-  
պէտ բերնով կը յայտարարեն թէ՛ սխալեցանք  
սնտուկը չկրնար վճարել, ինչպէս կը հոտա-  
տէ Ռուսիական խորհրդոյ համարատուութիւ-  
նը : Անտարակոյս և թէ զոյզն կամեցողութիւն  
լինէր, ինչպէս այլ պիտոյից նոյնպէս և ասոնց  
համար կրնային միջոց ձարել, սահմանեալ և  
խոտապեալ վճարումն ընել, և այժմ յաջո-  
ղիւ ճակատարաց ըսել թէ սնտուկն իր սահ-  
մանեալ վճարումներն ստրոգ զատարած է և  
պարտք չունի : Այո՛, այժմ պարտք չունի  
սա ամենայն սրաշտոնեայ, ինչպէս յայտարա-  
րեց Մելիքեան էֆէնտի, բայց պարտք ունի  
սա զաստիարակութիւնն և գաւառական ուղե-  
ւորութիւնս : Սակայն ո՞վ պիտի ճանչէ այս  
պարտքը : Մելիքեան էֆէնտի կըսէ թէ այժմ  
վճարուիլ սկսան, բայց ո՞ զիտե՛ թէ ո՞րչափ  
պիտի տե՛ն այդ վճարումը, և ինչ նոր ընդ-  
ղիմութիւն կամ արգելք երևան պիտի ելնեն

զայն խախտեալու . քանզի ամեն բանէ յառաջ  
պէտք է համադում գոյանայ թէ այդ վճարում-  
ներն անհրաժեշտ են, մինչդեռ միւս ամեն  
վճարումներէ նախադասելի . մինչդեռ այս մա-  
սին Ս. Պատրիարք Հօր յայտարարութիւններն  
մեծ յոյս չեն տար և բոլորովին նպաստաւոր  
չեն :

Պահ մ'առաջ՝ նախընթաց խնդրոյն միջո-  
ցին Ս. Պատրիարք Հայրը ըստ թէ, ևս կան-  
խաւ 50000 զուրուշ վճարելու որոշման օրն  
ըսած եմ թէ այդ գումարն անկարելի է վճա-  
րել մինչև որ հաստից աղբիւրները չկարգա-  
դրուին : Ճիշդ այդ պատասխանն էր որ հօր-  
ցատնդմանս մասին կատարելի Ս. Պատրիարքէն,  
քանզի ինչպէս կը յիշէք, ևս Ս. Պատրիարք  
Հօր վեց տարուան Պատրիարքութեան միջոցին  
զանազան առիթներու մէջ զաստիարակու-  
թեան պիտոյից մասին ըրած խօսքերն, յոր-  
գործներն և պատուէրները հաւարած էի իմ  
հարցապնդմանս մէջ, ի բաց առեալ այդ յայ-  
տարարութիւնը զոր այսօր յիշեցուց : Դիւրին  
է մակարերել թէ ի՞նչ սրտածուռ ևս չեմ  
յիշատակած այդ յայտարարութիւնը, քանզի  
կարելի չէր մտածել իսկ թէ զաստիարակու-  
թեան կարևորութիւնն ուղեքան սրտով և հոգ-  
ւով յայտարարող բերնէն զաստիարակութեան  
խոչընդոտ ուղեպիսի արգելիչ յայտարարու-  
թիւն մը լսելով պէտք էր հաւատալ թէ հա-  
մոգմամբ և զիտմամբ ըրած ըլլայ զայդ . բայց  
այսօր Ն. Սրբազնութիւնը կը հաստատէ իւր  
այդ խօսքն, և գործով կատարուցանէ թէ  
իր այդ խօսքն վերացական չէր, այլ գրական  
և հաստատական : Ռուսի ժողովն առաջին օ-  
րէն այդ յայտարարութիւնն պէտք էր բանել .  
և զատել թէ արդեօր աղգին բաղձանաց և  
կամաց համաձայն էր այդ . մանաւանդ թէ  
սահմանադրական Պատրիարք մը կրնա՞ր ընել  
այդ յայտարարութիւնն նոյն իսկ ժողովին ո-  
րոշման օրն ժողովն անտես ըրաւ զայդ . բայց  
իրողութիւնն հաստատեց թէ առաջին օրէն  
անգործադրելի որոշում մը բուէարկած է,  
և տակաւին նախընթաց նիստին Ս. Պատրիարք  
Հօր բերած պատասխանադրին վերջին մասը՝

որ կարգացուցեալ յատենի ժողովոյս և յետոյ  
իրրև ոչ—պատասխան նկատուելով ի բաց  
դրուեցաւ, կը հաստատէր թէ Ս. Պատրիարքն  
միևնոյն համոզման վրայ է, այսինքն զաստի-  
արակութեան յատկացեալ գումարն անվճա-  
րելի է . հայտադրածին դրամը մատուցատին  
տրուելով սրտաբ վճարուած չըլլար ըսած էր,  
և թէ Պատրիարքարանի համար առնուած զը-  
րանք Պատրիարքարանի պիտոյից պէտք է  
գործածուի, և եթէ յաւելնայ՝ ան տոնն ու-  
րիչ կարևոր պիտոյից կրնայ գործածուիլ : Եւ  
ըստ որում աւելնալիք ալ չունի, քանզի սրաշ-  
տոնից թիւն ու պիտոյը միշտ աւելնալու դի-  
րութիւն կայ, ուրեմն զաստիարակութեան  
համար երբէր դրամ չպիտի վճարուի :

Սրբազան Պատրիարքն ըստ թէ ան ա-  
տեն սրաշտոնեայք ամսական առնուլ չկրնա-  
լուն համար գործի չէին նայեր, և սրաշտոնեայ  
կայ, որ ամսականը առնուլ չկրնալուն համար  
ձգեր դայեր է : Ասոր կը հաւատամ . բայց  
այդ չաշխատող սրաշտոնեայք յետոյ իրենց  
ամսականներն ամբողջ առած են, ինչպէս  
հաստատեց Մելիքեան էֆէնտին : և զարմա-  
նալին այն է որ այդ չաշխատող սրաշտոնից  
մէջ կան որ առնելիք չունենալով հանդերձ՝  
Կեզր. սնտուկին տալիք ալ ունեն և դարձ-  
եալ աշխատելէ խոյս տուած են . փոքրիկ  
քննութիւն մը բաւական է ստուգելու թէ ո՞ր-  
քան գիր կը գրուի Պատրիարքարանի մէջ և  
ո՞րք են աշխատողք, թեքեա ամենէն քիչ ամ-  
սական աւելցողք . և այն որ ամսականի  
համար առեր քաղեր է՝ ամենէն աւելի  
սրարկեշտն ու խաճփոտներուն եղած ըլլալու  
է : Բայց այս վիճակին մէջ մի դարմանաք,  
երբ ըսեմ թէ նոր սրաշտոնեայ ալ աւելցած է :

ՄԵԼԻՔԵԱՆ Գ. ԷՅ. — Ո՞վ է այդ սրաշ-  
տոնեայն, անունն ըսէք :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅ. — Անունը չեմ գի-  
տեր, բայց զեղին պիտեղով երիտասարդ մ'իլ :

ՄԵԼԻՔԵԱՆ Գ. ԷՅ. — Այդ սրաշտոնեայն  
նոր եկած է և ոչ այն ատեն :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅ. — Ես ասիէ 3—4 ա-  
միս յառաջ տեսած եմ զանի Պատրիարքարա-  
նի մէջ, երբ արդի վարչութիւնը չէր կազմը-  
ուած . խնդիրն անձին և կարողութեան վրայ  
չէ . այլ թէ զաստիարակութեան համար վը-  
րամ չէ վճարուած, վասնզի սնտուկն անձ-  
կութեան մէջ էր ըսուեցաւ . սակայն նոր  
սրաշտոնեայ աւելցնելու և անոր ամսական տա-  
լու կարողութիւն կայ եղեր :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱՋԱՆ. — (ընդմիջելով)  
Եթէն ստրուան Պատրիարքութեան մէջ սըն-  
տուկը մտած 30 հազար լիրան ևս կերեր եմ  
եղեր . շուտ ըրէ այս 30 հազար լիրային հա-  
շիւը տուր նայիմ : Եթէ եօթը տարուան մէջ  
աղգը Պատրիարքարանին 30 հազար լիրա տը-  
ուեր է, զաստիարակութեան համար ալ միայն  
Պօլսոյ դպրոցաց կրկնադասիկ ետարտիկ  
ծախքեր ըրեր է : Գումարն ստուարացնելով  
չես կրնար համիլ նպատակիդ . խաղերու ժա-  
մանակն անցած է . այս տեսակ խօսքերն հա-  
սարակաց կարծիքն մտրեցնելու կը ծառայեն :  
Շխտակն ըսելով, ոչ Պատրիարքարանին հա-  
մար տրուածը բաւական է, և ոչ զաստի-  
արակութեան, մանաւանդ բաղդատելով մերը միւս  
աղգաց Պատրիարքարաններուն հետ՝ որոց հետ  
հաւասար կընթանայ, և դուք ալ անոնց հա-  
ւասար գործ կուէք մեզմէ . երբոր բաղդա-  
տէք մեր Պատրիարքարանը, մտածը իւր կա-  
րևորութիւնը կը կորսնցունէ . ուստի ոչ Պատ-  
րիարքարանին համար տրուածը և ոչ զաստի-  
արակութեան համար տրուածը բաւական չեն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Սրբազան Հայր, թոյլ  
տուէք որ ասեմարանն իր խօսքն աւարտէ և  
սարս պատասխանելու շնորհ ըրէք :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱՋԱՆ. — Ես շատ նստե-  
լու ժամանակ չունիմ, պիտի երթամ : Գատտի-  
արակութեան համար 50000 զուրուշ նշանակ-  
ուեր է ելմտացոյցին մէջ . ի՞նչ կըլլայ այդ  
փոքրիկ գումարով . Ռու. Խորհուրդը Կեզր.  
վարժարանին համար ծրագիր մը հրատարա-

կեց, տեսայ. ի՞նչ տարբերութիւն ունէր հասարակ վարժարանաց ծրագրեն. միթէ ես ինքքս չէ՞ր որ այդ վարժարանին շինութեան համար փոխատու գտայ. եկար ինձի աղաչեցիր, բայց դուն փոխատու անարգեցիր, առանց իմ հրամանիս դայիր վարժարանը բացիր. և հիմա ելեր իմ խօսքերս կը ժողվես, և դիտ դատարարակութեան թշնամի ցուցնել կուզես, մինչդեռ ես ազդին դատարարակութեան պէտքը հանապաղօրեայ գործերուս մէջ ամենէդ աւելի կողմամ և սրտի մտօք կը փախարիմ որ հիմնական կարգադրութիւններ ըլլան այս մասին, և ազդին պէտքը լեցնելու չտի արդիւնք տան: Կեզր. սնտուկն եկած ստակն իր պէտքին հողիւ կօդատէ. այս սրատճառաւ ասկէ առաջ առաջարկեցի դատարարակութեան համար զատ սնտուկ ստհմանուի, որ Պատրիարքարանին համար զատ և դատարարակութեան համար զատ տուրք հաւարութի. բայց դուք մտիկ չըրիկ և միացուցիր. մտիկ չընողներէն մէկն ալ դու չէ՞ր:

**ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ.** — Այդ առաջարկութիւնն չընդունող ժողովին հետ համամիտ էի. վասն զի ուղղակի տուրքը մէկ անունով կրնայ հաւարուիլ:

**ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ** — Ուրեմն դուն ես դատարարակութեան թշնամի, դուն ես յառաջադիմութեան խոչընդոտ հանողն:

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Կը խնդրեմ, մի յուզուիր, Սրբազան Հայր, յուզմամբ մի խօսիր:

**ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ.** — Ուրեմն դուք ալ այժմ շնորհ ըրէք իմ պատասխաններս լսել. տեսէք իմ ընտրութեանս և սովորութեանս հակառակ ո՞րչափ հանդարտ կեցած եմ այս բեմին վրայ, բայց նախ և յառաջ ինձի դէմ ըրած անձնական թշնամանացը յօժարամիտ կը ներեմ, իսկ խնդրոյն բնաւ չեմ ներեր. դատարարակութիւնն ազդին կենաց և մահու խնդիրն և ազդին վերակենդանութեան միակ

միջոցն անուանած էք, և իրօք ալ այնպէս էրայց Ձեր Սրբազնութիւնն այդ մասին դարձնական արդիւնք մը չի ցուցուց ցարդ. և այդ պատճառաւ ես ձեր խօսքերն հաւարեցի և ներկայեցի ժողովին, որպէս զի դուք ալ ձեր գործերն յերեւան հանէք և ներկայէք ժողովին: Սակայն դուք կըսէք թէ դատարարակութեան համար յատկացեալ 50000 դուրուշն աննշան գումար մ'էր, ատուլ բան չէր ըլլար: Ուրեմն ինչո՞ւ աւելի մեծ գումար մը չառաջարկեցիր ժողովին, և ընդհակառակն կանխաւ յայտարարեցիր թէ այդ որոշեալ 50000 դուրուշը չպիտի կրնայ վճարուիլ: Թող շնորհ ընէիք այդ գումարը վճարել տալ, փորձով տեսնելու համար թէ անով բան մը արդիւնք մը պիտի գոյանար թէ ոչ: Կը մոռնա՞ք Սրբազան Հայր, թէ Երանազարեան վարժարանն ալ հազիւ 40000 դուրուշ տարեկան անշարժ հասոյթ ունէր:

**ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ** — Բայց ան տարեկան 1500 ոսկի ծախք ունէր:

**ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ.** — Բայց իր անշարժ և ապահով հասոյթն կտակաւ թողուած 6—7 հազար բոնսօլիտէին տարեկան շահ 400 ոսկին էր, և մնացեալն աշակերտներէ կը գոյանար. Կեզրոնական վարժարանն ալ թէ՛ այդ 50000 դրշն և թէ՛ Վալաթիոյ կալուածոց հասոյթէն 40000 դրշն և թէ՛ աշակերտներէ հասոյթ պիտի ունենար, որով առանց գիշերօթիկ վարժարանի մը ծանրութիւններն ունենալու տարեկան 1500 ոսկոյ մօտ ծախք մը կուեննար, և աւելի մեծ արդիւնք կրնար բերել: Կըսէք թէ Կեզր. վարժարանին ուսմանց ծրագիրն տեսայ, որ մեծ բան մը չէր և հասարակ վարժարաններէ տարբերութիւն չունէր: Աստ ձեռնհասութեան խնդիր մը կեղծէ մեր դէմ. սակայն փութամ ըսել թէ, Ուսմ. խորհուրդն ընտրուած էր Վարչութեան, եթէ այդպիսի անձեռնհասութեան տեղի կար. փոխանակ գործը կասեցնելու, անձինքը փոխելու էր: Սակայն կը յիշեցնեմ Ձեր Սրբազնութեան թէ

նոյն իսկ այդ խորհրդոյ անձանց համար պատուարեր յիշատակութիւն մ'ըրած է Ձեր Սրբազնութիւնն յատենի Ազգային ժողովոյ Ձեռն. 1879 թէ «Ուս. խորհուրդը բարեյօժար արամադրութիւններ ցուց կուտայ և գործելու ետանդ ունի. թողէք ուրեմն որ գործէ և գոհ կըլլար ի վերջէ»: Նոյն իսկ այն ծրագիրն՝ զոր Ձեր Սրբազնութիւնն անբաւական կը յայտարարէ այսօր, 1879 նոյեմբեր 2 ի նիստին մէջ Վարչութեան հետ ստանձնելով բերիք ժողովիս. այն օրն և անկէ առաջ կրնայիք այդ ծրագիրը փոխել և լաւադոյնը պատաստել: Ահա նոյն նիստի ատենագրութիւնն, զոր ի ձեռին ունիմ, կը հաստատէ ըստ յերես 313 Վարչութեան պաշտօնագրովը ներկայացած է Ուս. խորհրդոյ ծրագիրն և տեղեկագիրը, յորում բացատրուած են թէ 50000 դուրուշն ինչ բանի պիտի գործածուի, Կեզր. վարժարանն ինչ նպատակ և ընթացք պիտի ունենայ, և այլն: Ձեր Սրբազնութիւնն ալ յերես 322 ըսած է, «Ի՞նչ օգտակար խորհուրդներ որ ունիր այս մասին՝ սիրով կընդունիմ և կօրհնեմ՝ զձեզ որ լաւադունին կը բաղձար. բայց այս անգամ որ Ուս. խորհրդոյ ծրագիրը Վարչութեան հետ ընդունեցինք, ուրիշ նպատակաւ չէք, այլ գործադրութեան սկիզբ մը տալու, փորձ մ'ընելու համար էր միայն, վասն զի միշտ փորձն իմաստուն առաջնորդ է ամեն գործի մէջ. թողէք ուրեմն որ Ուս. խորհուրդն փորձ մ'ընէ, թողէք որ իւր ծրագիրն գործադրելու աշխատի»: Կը տեսնէք, Սրբազան Հայր, թէ ոչ միայն Ուս. խորհրդոյ ծրագիրն ընդունած էք, այլ և զայն յատկապէս յանձնարարած էք ժողովիս և թոյլտուութիւն խնդրած էք: Ժողովն ալ Ձեր Սրբազնութեան առաջարկութեան համեմատ ստուար մեծամասնութեամբ որոշեց Կեզր. վարժարանի խնդիրն՝ իրր վարչական խնդիր՝ վերադարձնել Վարչութեան ի գործադրութիւն: Ահա ժողովն Ձեր այդ խնդրած թոյլտուութիւնը տուաւ այն օրը, և այսօր իր որոշման ոչ—գործադրութեան համարն կը պահանջէ. Ուս. խորհուրդն իր համարատուութեամբն ամեն

պատասխանատուութենէ ազատիլ կը ջանայ. և Վարչութիւնն Մեկլիքեան էֆէնախի բերնով կը յայտարարէ թէ արդարեւ որոշեալ գումարը չվճարուեցաւ. Ձեր Սրբազնութիւնն ալ նոյնը կը հաստատէ. ուրեմն Ուս. խորհուրդն կաղափար և Վարչութեան հետ Ձեր Սրբազնութիւնը պատասխանատու կը մնայ:

Տեսարք Երեսփոխանք, զձեզ աւելի լաւ համոզելու համար թէ դատարարակութեան գումարին չվճարուիլը Կեզր. սնտուկին անկարողութեան պատճառաւ չէր, ուրիշ վաւերական ապացոյց մը պիտի փութամ մէջ բերել, չօշափելի ապացոյց, զոր չէի ուզեր ներկայել, բայց կտախարիմ այժմ. որպէս զի լաւ հասկընար թէ, Կեզր. սնտուկն դատարարակութեան համար որ և է գումար մը վճարելու պարտաւոր չնկատելու սկզբունքն է բուն պատճառ 50000 դուրուշին ոչ—վճարման:

Ուս. խորհուրդն օժանդակ մասնախորհուրդ մը կարգելով, Վարչութեան հաւանութիւնն ստացեր և Ս. Պատրիարք Հօր հրամանաւ ի պաշտօն հրաւիրեր է: Օժանդակ մասնախորհուրդը պաշտօն ատեր է վարժարանաց այցելութիւններ ընել, հսկել և ըն: Այս մասին երթեկութիւններ ունեցեր է յիշեալ օժանդակ մասնախորհուրդն և տասը ամսուան մէջ երեք հարիւր դուրուշի ծախք մ'ունեցեր է, զոր պահանջեր է Կեզր. սնտուկէն: Ահա բուն նամակն կը ներկայեմ ձեզ, որոյ ճակատը Ս. Պատրիարք Հօր մէկ զխտողութիւնն ալ կայ արձանագրեալ:

**ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ** — Իմ զխտողութիւնս կարդա, որ տեսնեն թէ ինչ գրած եմ:

**ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ.** — Նախ նամակը պիտի կարդամ, և ապա Ձեր Սրբազնութեան զխտողութիւնը:

[ Կը կարդայ հետեւեալ նամակը ]

Համար 69

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայր .

Կը յիշէք անշուշտ որ անցեալ օր Ուսումնական խորհրդոյ և Օժանդակ Մասնախորհրդոյս ստորագրութեամբ գրութիւն մը ներկայելով Ձեր Բարձր Սրբազնութեան, խնդրեցինք հրամայել առ որ անկէ, Օժանդակ Մասնախորհրդոյս անդամոց Մայրաքաղաքիս վարժարաններն ըրած այցելութեանց առթիւ եղած 300 զրչի ծախքերն վճարել, Ձեր Բարձր Սրբազնութիւնն սոյն խընդիրն Տնտեսական խորհրդոյ յանձնած ըլլալով յիշեալ Պատուարժան խորհուրդըն Մասնախորհրդոյս Դիւանագլխին կը յայտարարէ թէ՛ ինքն չընդունիր այդպիսի սկզբունք մը և հետեալար չկրնար վճարել նոյն ծախուց դումարն .

Ուսումնական խորհուրդն երբ 1879 Դեկտեմբեր ամսոյն Պատկառելի Քաղաքական Ժողովոյ հաւանութեամբն պաշտօնի կոչեց զմեզ, հրահանգ տուաւ նաև Մայրաքաղաքիս ազգային վարժարաններն այցելել և անոնց բարեկարգութեան հսկել, Մասնախորհուրդս յօգուտ դաստիարակութեան յանձն առաւ սոյն պաշտօնն և իւր ամենածանր գործոց հետ փութաց նաև միշտ այցելել բոլոր ազգային վարժարաններն, անոնց բարեկարգութեան հոգ տանիլ, եղած վէճերն քննել ու կարգադրել և մի քանի փակեալ վարժարաններ իսկ բանալ, Այս այցելութիւններն անշուշտ ծախքով կը լինէին, Մասնախորհրդոյս ըրած այս

ծախքերն շողենաւի, նաւակի, կառքի և ձիու վարձքեր էին և ոչ ուրիշ բան, Երբեմն այս այցելութեանց պաշտօնն ունեցող անձանց 4500 զրչ ամսական կը վճարուէր, որք սակայն տկնկալեալ արդիւնքը չտրտադրեցին, բայց այսօր Մասնախումբս իւր պաշտօնն խղճի մտօք կատարելով հանդերձ՝ տասն ամսուան միջոցին մէջ հազիւ 300 զրչի ծախք մ'ըրած է և այն իսկ չվճարուիր .

Մասնախումբս իւր պաշտօններովն ծանրաբեռնեալ կը փափաքի միշտ իւր գործերն ընդ փոյթ կարգադրել, շատ անգամներ իսկ իւր դիւանէն ելած գրութիւններն ժամանակին իրենց տեղերն հասցնելու համար իւր քսակէն ծախքեր ըրած է, Այս վիճակին մէջ միթէ եղած ծախքն մեծ դումար մ'է, որ Պատուարժան Տնտեսական խորհուրդն կը զլանայ իրեն վճարել .

Մասնախորհուրդս չկարծեր որ յիշեալ Պատուարժան խորհուրդն իրաւունք ունենայ այսպիսի որոշում մ'ընելու քանի որ գիտէ թէ ըստ Մահմանադրութեան հրամանն Ձեր Սրբազնութեան և որոշումն Քաղ. Ժողովոյ կը վերաբերի և միայն ի գիտութիւն կը հաղորդուի իրեն, այն ալ ելմտացոյցին մէջ չսահմանուած ծախուց համար և ոչ թէ դաստիարակութեան վերաբերեալ ծախուց՝ որուն համար Ազգ. Ժողովն արդէն 50000 զրչ որոշած և Քաղ. Ժողովոյ յանձնած է ի գործադրութիւն, հետեալար ինչ իրաւամբ կը մերժէ Տնտես. խորհուրդն այնպիսի վճարում մը՝ որ Բարձր Սրբազնութեանդ կողմէ հրամայուած է .

Արդ՝ եթէ օրէնք և իրաւունք է որ անձնուիրարար աշխատող պաշտօնեայք պարտաւոր ըլլան միանգամայն այս կարգի ծախքերն իրենց քսակէն ընելու, թող բարեհաճի Բարձր Սրբազնութիւնդ հրամայել Մասնախումբս և պատրաստ եմք անմիջապէս կրել այդ ծախքն .

Ուստի կը խնդրեմք որ բարեհաճիք կամ վերոյիշեալ հրամանն ընել մեզ անմիջապէս և կամ հրաման տալ կեդր. Սնտուկի Գանձապահին Մասնախումբս այցելութեանց ծախքերն՝ որ վերոյիշեալ դումարէն զատ 77 զրչ ևս ըլլալով 377 զրչի հասած է, վճարել անյապաղ .

Օժանդակ Մասնախորհուրդս կը յուսայ որ Ձեր Բարձր Սրբազնութիւնն ինկատի առնլով իւր այս խնդիրն կը բարեհաճի պարտապատշաճ տնօրինութիւն մ'ընել .

Մնամք խորին յարգանք  
ի դիմաց Ուսումն, Օժանդակ  
Մասնախորհրդոյ

Ատենադպիր Ատենապետ  
Գ. ԴՈՒՅՈՒՄՃԵԱՆ Գ. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ

1 Հոկտեմբեր 1880  
ի Պատրիարքարանի Հայոց  
Կ. Պօլիս

(Կնէ)

Այս նամակին վրայ Ս. Պատրիարք Հօր զիտողութիւնն ալ ահաւասիկ .

Պատուարժան Տնտեսական խորհրդոյ իրաւասութեանն կը պատկանի . պէտք է որ անոր հաճութեամբը վճարուի որ և իցէ նոր տեսակ ծախք, ես անձնապէս կը հաւանիմ որ ամեն ծառայողք ոչ միայն իրենց ծախքը՝ այլ նաև լիուրթ վարձքը ստանան եթէ անտուկը կարողութիւն ունենայ .

Պ. Կ. Ն. Ե.

4 հոկտ. 1880

Կարծեմ որ բացատրութեան չկարօտիր այս նամակը և Ս. Պատրիարք Հօր զիտողութիւնը . Դաստիարակութեան պաշտօնեայն յտուկացեալ 50000 զուրուչ դումարէն 300 զուրուչ կուզէ . և Տնտեսական խորհրդականք կը մերժեն զայն վճարել իրրև նոր սկզբունք նկատելով զայն, և Պատրիարք Սրբազանն ալ ոչ միայն «նոր տեսակ ծախք» կը համարի, այլ և անտուկին անկարողութիւնը փաստ կը բերէ, որեմն ըսե՞նք թէ կեդր. սնտուկն իրօք անկարող էր այդ փոքրիկ դումարն վճարելու, սակայն ճիճաղելի կըլլար այս առարկութիւնն . բայց ըսենք ճշմարտոն թէ կեդր. սնտուկը պարտաւոր չնկատուիր դաստիարակութեան համար բան վճարելու : Ահա ևս ալ զսոյդ կ'որոնեմ . որուն համար Ազգ. Ժողովոյ որոշումը չէ գործադրուած :

[Սոյն միջոցին Սրբազան Նախագահը ինչպէս որ կ'անխաւ յայտարարած էր թէ չսխտի կրնար երկար ատեն մնալ Ժողովէն կ'մեկնի] .



կասարին : Պէտք է այնպէս մը մտադրել այս արմատացած և տիրող գաղափարին դէմ , որ աստնը սասանին և տկարանան , և այնպիսի վիճակի մը հասնին որ իրենք հոգ տանին նախ և յառաջ դատարարակութեան և այլ կարևոր պիտոյից ծախուց վճարմանն զէթ իրենց հանգըստին համար եթէ ոչ ազգասիրական ըզգացումէ զրդեալ :

Միթէ այս արմատացեալ և տիրող գաղափարին հետևանքը չէ՞ր որ այն օրն , յորում Վարչութիւնն 50000 զուրուչի վճարման եղանակի որոշումը կը խնդրէր ժողովէն , Ս. Պատրիարքն ալ միւս կողմէ կը յայտարարէր թէ այդ 50000 զուրուչի վճարումն անկարելի է , միևնոյն նիստին և միևնոյն ժամուն և յիթէ այն օրն թափանցէինք և ներկայ փորձառութիւնն ունեցած ըլլայինք , միթէ կարելի՞ էր որ ներկինք սահմանադրական Պատրիարքի մը այդ տարօրինակ յայտարարութիւնն ընելու : Բայց ի՞նչ մտածեցինք , Ն. Սրբազնութիւնն խօսք մ'է որ կընէ . և միթէ կարելի՞ է որ դատարարակութեան այնչափ կարևորութիւն տուող Պատրիարք մը չկարենայ հոգ տանիլ այդ յատկացեալ գումարին վճարման . եթէ սնտուկն անձկութիւն իսկ ունենայ , Պատրիարքն և վարչութիւն միւս վճարմանց 10 առ 0/0ը յետաձգելով կրնան այդ վճարումն ընել և ազդին մեծ պիտոյքը լեցնել . իր անձնական հանգստին համար իր թոշակէն զեղջող և խորհրդական կամ փոխանորդ պաշտօնէից ամսական յատկացնող Պատրիարք մը կրնար ոչ թէ զեղջ՝ այլ յետաձգում մը տալ իր թոշակին մէկ մասին և դատարարակութեան այլ տոյքը ընուլ : Աստի նոյն աւուր այդ ձախող յայտարարութիւնն Ն. Սրբազնութեան հիւանդութեան վիճակին տակ յիշատակել քան թէ իրական դիտման տալ պատշաճ համարուեցաւ . ճիշդ ինչպէս որ այս աւուր իմ անձիս դէմ ըրած նախատական ակնարկութիւնք ալ այդ վիճակին հետևանքը նկատել արժան կը համարիմ :

Բոլոր ըսածներէս զխրին է հետևեցնել թէ

իմ խօսքերս մասնաւորապէս ներսէս Պատրիարքին ուղղեալ չեն , այլ զրուծեան . քանզի ցարդ քանի Պատրիարք որ գիտեմ , միևնոյն գաղափարին տէր նկատած եմ . Քէորդ Պատրիարքին օրէն սկսեալ այս տեսակ խնդիրներ յուզուած են . ան ասան հիւանդանոցի վարժարանին խնդիրը կար , և Պատրիարքարանի սընտուկին անձկութեան պատճառ նկատուած էր այն . և նոյն վարժարանին համառօտութիւնը մտաբերուեցաւ ի շնորհս Պատրիարքարանի պաշտօնէից գիւրակեցութեան :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Հիւանդանոցի և անոր սրբանոցին սեփական եկամուտներն ալ Պատրիարքարանէն գրաւուեցան :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Բիշ մ'ալ Պոլսէն դուրս ելնենք . միևնոյն դաղափարը պիտի տեսնենք ամեն կողմ . ստաջնորդք և վանահարր իրենց տրամադրութեան ներքև ազգային սնտուկներ ունին . և այս սնտուկներուն հատոյթն իրենց և իրենց գործակից անձանց ասրուտօտին համար սահմանեալ կըմբռնեն . կրթութեան և այլ պիտոյից անուն երբ ասանք , եթէ անոնց դէմ չեղնեն՝ դոնէ պիտի ստատահանեն թէ՛ հատոյթի ուրիշ ազդիւր դուշք . մենք կ'ոճողակ , քարոզ և այլ ինչ որ ուղուկուտանք , միայն մեր պիտոյից յատկացեալ սնտուկէն ստակ չենք կրնար տալ : Ահա այս տիրող գաղափարին դէմ սէտք է մտադրել և ի հիմանց տապալել զայն , եթէ ազգին ճըմարտ օգուտն կը փախարխար :

Բայց ո՞վ է այս տիրող գաղափարին դէմ մտադրելու ամենէն բնական և յարմար մարմինը , ըսեմ ձեզ զայն , վարժապետութիւնը : Այս սրայքարն շատոնց սկսած է , գործոյ սպարիզին վրայ ես այ իբրև վարժապետ և դպրոցական պաշտօնեաց այդ սրայքարին մէջ գտնուած եմ շատ անգամ . և այսօր որ այս բեմին վրայ կը հանեմ խնդիրն , և այդ լուելեայն սրայքարն ի լոյս կը բերեմ , փառք կը սեպեմ ինձ . բայց կը փութամ յայտարարել թէ

արդէն դպրոցական պաշտօնս թողուցած եմ , որով տեղի չիկայ անձնական շահու վերագրել զայս : Վարժապետք իբրև պաշտօնեաց կըրթութեան մեծ գործին , և անկէ սպրտատունեցող բնականաբար մօտէն կզգան կրթութեան տխուր վիճակն , և կաղաղակեն թէ այս ծախքերն անբաւական են , թէ եղած ծախքն ալ յուսկէսու կը վատնուի , ընդհանուր հսկողութեան և քաջալերութեան սրահութեանը պատճառաւ . թէ իրենք նախատուած և մուրացիկ վիճակի մէջ են . մինչդեռ ազգին եկեղեցական պաշտօնեացը լաւ և հանգիստ ասպրեւ զիւրութիւններ ունեցած են : Այս գանգամներն ու այս ազաղակներն լուած են և շարունակ կը լսուին մանաւանդ վերջին 10—15 տարուան մէջ . վարժապետք իրենց պաշտօնին բնական հետևութեանրը վարժարանաց յառաջադիմութեան համար դանաղան միջոցներու զիմեցին , բայց դրեթէ բնաւ չը յաջողեցան . ոչ թաղային վարչութիւնք կարևորութիւն տուին և ոչ Պատրիարքարանն կրցաւ հիմնական դարման մը տանիլ : Ան աստե՛ն վարժապետք սկսան յոյսերնին կտրել ազգային վարժարաններէն և մաս մ'ոյս ասպարէզէն քաջուեցան , մաս մ'ալ իրենց անձնական ստատահանատուութեան տակ վարժարաններ բացին , որք հակառակ բազմադիմի դժուարութեանց և խոչընդոտներու՝ մեծ յաջողութիւններ ձեռք ձգեցին . և այսօր ազգային վարժարաններէն տակի կանոնաւոր մասնաւոր վարժարանք կան շնորհիւ վարժապետ հիմնադրաց : Նոյն իսկ Եանազարեան վարժարանն հոգեւոյ Միքայէլեան Սիմօն վարժապետի ջանից և անոր գործակից վարժապետաց շնորհիւ չհաստատուեցաւ , 500 զուրուչ ամսականի արժէք ունեցող վարժապետ 150—200 զրշի պաշտօն յանձն առնլով սրտի մտօք ծառայեցին անոր , որ հետզհետէ վարժարանն զօրանայ և զարգանայ , ինչպէս որ եղաւ ալ :

Ա. ԱՃԱՃԵԱՆ Հ. ԷՖ. — Ատենապետ է Ֆիէնտի , այս խօսքերուն տեղն է մի . ինչո՞ւ խնդրէն դուրս կ'եղնէ ատենաւորանն :

(Նշուիք ժողովին մէջ : Չայներ թողէք որ աւարտէ խօսքը )

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Շարունակեցէք ձեր խօսքը , ֆախաղեան էֆէնտի :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Այո՛ , պիտի շարունակեմ , և վերջարանութիւնս ալ մօտ է : Շնորհակալ եմ ժողովէն որ խորին լուրջեամբ ունկնդիր կը լինի ինձ . բայց կուզեմ փորրկ պատասխան մը տալ Արճաճեան էֆէնտիին , Դուք Արճաճեան էֆէնտի , զբաշն նոր եկաք և իմ խօսքերս ամբողջութեամբ մտիկ չըրիք որ կարենայիք դատել թէ խնդրէն դուրս եմ թէ ներս : Ես նոյն իսկ ձեր խնդիրն ու դասն ստանձնած եմ . դուք վարժապետ մ'էիք երբեմն , և քաջուեցաք ասարեղէն , ի՞նչ էր պատճառը . ոչ դատարարակութեան սրտի մտօք հոգ տանող դուք , և ոչ վարժապետաց վիճակին բարւոյնմանն փոյթ տանող ու սրտայն տրժանաւոր յարգանքը տուող : Ահա ես այդ վիճակին բուն պատճառն է որ կտրուեմ , և յոյց կուտամ ժողովին : Դարձեալ դուք չէիք որ ճնտ . խորհրդոյ պաշտօնավարութեան մէջ Պատրիարքարանի պաշտօնէից վիճակը մօտէն քննելով և տեղեկանալով , ըսիք ինձ , ֆախաղեան իրոււնք ունիք եղեր ինչ որ այս պաշտօնէից համար կըսէիք . ահա ես այսօր այդ պաշտօնէից , կեզր . սնտուկին հասոյթն իր տարրատին միայն սեփական կարծող պաշտօնէից դիտմանց և գաղափարին վրայ կը խօսիմ և այս մասին ժողովին ուշադրութիւնը դարձընել կուզեմ :

Արդ , Տեարք երեսփոխանք , խօսքս վերջացնելու պահուն համառօտ եզրակացութիւն մը կուզեմ ընել : Ազգային ժողովն որոշեց որ կեզր . սնտուկն դատարարակութեան պիտոյից համար 50000 զուրուչ վճարէ անցեալ տարի . Վարչութիւնն հակառակ խրատաւարութեան և կրկին խոստմանց չվճարեց այդ գումարէն դանկ մի , ինչպէս Մելիքեան էֆ. յանուն նախորդ Վարչութեան հաստատուեց զայս : Արդի Վարչութիւնն սկսայ վճարել կըսէ . բայց Պատրիարք Սրբազան այժմ իսկ ուրիշ հասոյթի աղբիւրներ գտնելու ակնարկութիւններ կընէ այդ վճարման համար . արդ միևնոյն վիճակին մէջն ենք , ինչ որ էինք 1879 նոյ . 2 ին . ուրեմն այս անգամ փորձառութիւնէն օգուտ պէտք է քաղենք . Վարչութեան այդ յայտարարութիւնը

պէտք չէ քաւական սեպել, այլ պէտք որ Ա. Պատրիարք Հայրն ալ նոյն յայտարարութիւնն ընէ և խօսք տայ այդ վճարման համար՝ պարտաւոր նկատելով Կեդր. սնտուկն դաստիարակութեան պիտոյքն հոգայու։ Ասր թէ ոչ պէտք չէ վատահալութիւն ունենալ արդի վճարման վրայ ևս. բանդի առաջին պատեհութեամբ երբ սնտուկն անձկութեան մէջ լընայ, ամեն բանէ յառաջ գրիւտողն դարձեալ դաստիարակութեան պիտոյքն պիտի ըլլայ, ինչպէս նաև գաւառական սոցիալութեանց և հովուութեանց պիտոյքը։ Եւ սրպէսդի այս զբր. կողմիցն չլինի, և մինչև իսկ այլ ամեն բանէ յառաջ դաստիարակութեան և գաւառական պիտոյք հոգացուին, պէտք է հանդիսապէս յայտարարել թէ՛ Աղղային Կեդր. սնտուկն սարտաւոր է հոգալ և ընուլ դաստիարակութեան և Փաւ. սոցիալութեանց պիտոյքն ըստ սահմանեալ Ելմտոյցոյցի, և Սրբազան Պատրիարք և Վարչութիւն սարտաւոր են զայն ճշգրտ գործադրել թէ՛ ամենայն Աղղային սնտուկ սարտի դաստիարակութեան համար կարևոր բաժին մը հանել, և Սրբազան Պատրիարք և Վարչութիւն այս մասին սարտաւոր են մասնաւոր հոգ տանիլ և հսկել. և թէ և կեղեցականք իրաւունք չունին իրենց իրաւասութեան տակ գտնուած ազգային սնտուկներով իրենց սահմանեալ պիտոյքները միայն հոգալ։

**ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՆԴԱՄԲ.** — Ո՞ր կեղեցականք, մասնաւորէ խօսքդ։

**ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՑ.** — Անշուշտ այն և կեղեցականք՝ որ իշխանութեան գլուխն անցած լինելով, իրենց տրամադրութեան ներքև ազգային սնտուկներ ունին. և են կաթնովի կոսք, Պատրիարքը, Առաջնորդը և Վանահարը։

**ՄԵԼԻՔԵԱՆ Գ. ԷՑ.** — Փախաղեան է՝ Ֆիլնտի դաստիարակութեան համար խոստացեալ 2500 դուրուշը չվճարուելուն ստիպուած խօսքերուն մէջ ուրիշ շտա բաներու վրայ ալ խօսեցաւ. ևս բուն խնդրոյն վերաբերեալ կէտերուն միայն պիտի սրատախտանեմ ի դիմաց նախորդ Վարչութեան, միայն կան կէտեր որ անուղղակի հարցադիման խնդրոյն

վերաբերութիւն ունին, կան նաև ուրիշ կէտեր որ խմ նախորդ վարչութեան օրով սրատածին կը վերաբերին սասնց ալ պիտի սրատախտանեմ։

Նոյն կրտէ Փախաղեան է՝ Ֆիլնտի մարտի մէջ զայցեր բններ և տեսեր է որ 420 հազար դուրուշ մտած է Կեդր. սնտուկը։ Այդ դուժմարը տուժարներով կրնայ ճշգրտել։ Բայց այս ալ հարցադիման խնդրոց հետ վերաբերութիւն չունի։ Ես իր հարցադիմումն սա կերպով միայն ըմբռնեցի թէ ինչո՞ւ 80 մայիս վերջը չէ վճարուեր դաստիարակութեան յատկացեալ ամսականը, տնոր համար ևս ոչ 80 մայիս մէկին վիճակը ներկայեցի։

Երկրորդ՝ կրտէ Պաշտօնեայք սարտական էին սնտուկին։

Մայիս մէկին սրատածեաներէն տմանք սարտը և ոմանք սահանջը ունէին. բայց այդ սարտը նախորդ տարիներէն սերեալ էր և առաւել թղթադրամոց ստիպու տեղի ունեցած էր. բնականաբար երբ սրատածէին մէկը եօթնութ հազար դուրուշ սարտական էր, մէկէն ի մէկ չէր կրնար այդ սարտը սրտուեր, այլ ամսէ ամիս մէյմէկ դուժար պիտի հաշուակըցուէր . . . . .

Ատենտակտ է՝ Ֆիլնտին կյիշեցնէ տեսնարան է՝ Ֆիլնտին թէ կրեախտաններն հետզհետէ կմեկնին Ժողովէն և թէ ժողովին վակման ժամը հասած լինելով ատենը վակելու տարալուած է։ Ատենտարան է՝ Ֆիլնտի բեմին կիթղու խօսից կարգը իրեն սրահելով։

Ատենը գոցելէ առաջ Դիւանը 3 բայակցութիւն ունեցող երեախտանաց ցոցակը կներկայէ որք են՝

- Խորէն եղս. Նար—Պէյ
- Միքայէլ է՝ Ֆիլնտի Մոմճեան
- Մկրտիչ » Քաղանճեան
- Վիչէն » Ապտուլլահ

և Աթմարինէ Արտակեան չորրորդ բայակցութիւն ունենալով ըստ օրինի հրաժարեալ կը հրատարակէ։

Յաջորդ նիստը յառաջիկայ 81 յունվար 23 ին գումարելու որոշմամբ ատենը վակեցաւ ժամ 10 1/2 ին։

Ատենադպիր Ատենտակտ  
Մ. ՉՕՊԱՆԵԱՆ Գ. ՂԱՋԱՐՈՍԵԱՆ

*[Faint, illegible text and markings on the right page, possibly bleed-through or ghosting from the reverse side.]*

# ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

## ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

1. Բացակայութիւն երեսփոխանաց :
2. Առաջարկութիւն Ս. Փափազեան էֆէնտիի .
3. Դարձեալ առաջարկութիւն Ս. Փափազեան էֆէնտիի .
4. Ընտրութիւն Նախաքննիչ զիւանաց ատենապետներու . :

## ՕՐԱԿԱՐԳ

- Ա. Առաջարկութիւն Ս. Փափազեան էֆէնտիի ի մասին հաշուետուարաց կեդր. սնտուկի.— տեղեկագիր Նախաձեռնութեան զիւանի .
- Բ. Պատասխանագիր Ս. Պատրիարք Հօր ի վերայ հարցապնդման Փափազէֆէնտիի .

## Գ/ն 2 որոշ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԵԴՐՈՂԱԿԱՆ ՍՆՏՈՒԿԻՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ ԵԱԽՈՒՑ ԹԱՏԿԱՑԵԱԼ

Կը ծախուի ի Դիւանատան Պատրիարքարանի եւ Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ շանկայը եւ Հայ գրավաճառաց բով